232. Արհեստավորը մի տարում աշխատեց 414 թուման: այդ գումարի $\frac{1}{3}$ մասը նա դրեց խնայողական արկղը: Ո՞րքան փող խնայեց նա:

233. Խանութ բերին 891 փութ ապրանք, որի $\frac{1}{9}$ մասը փչացել էր ճանապարհին: Քանի փութ ապրանք մնաց:

234. Գիւղացին ժողովեց 424 բաթման ցորեն, որի $\frac{1}{4}$ մասը պահեց, իսկ մնացածը ծախեց բաթմանը 2 ղուանով: Ո՞րքան արժէր ծախած ցորենը:

235. Ալափի խանութում կար 864 բաթման ցորեն, 4 անգամ պակաս գարի և գարուց 3 անգամ պակաս հաճար: Քանի բաթման հաճար կար խանութում:

236. Ալափը ծախեց 925 բաթման ածուխ, իւրաքանչիւր 37 բաթմանը 40 ղուանով: Որքան փող ստացաւ:

237. Մի զիւծին արծաթէ գդալն արժէ 198 ղուան: Քանի արժէ մի հատը:

238. Սպահանից— Զիրազ 465 կիլոմետր է: Քիրմանշահից— Համազան՝ կազմում է առաջին երկու քաղաքների միջև տարածութեան $\frac{1}{3}$ մասը: Ո՞րքան տարածութիւն է Քիրմանշահից— Համազան:

Կազմեցէք խնդիրներ բաժանման գործողութիւնով:

ա. Կազմել մի խնդիր, որը լուծելու համար հարկաւոր լինի մի թիւ փոքրացնել մի բանի անգամ:

բ. Կազմել մի խնդիր, որը լուծելու համար պէտք լինի թիւը բաժանել հաւասար մասերի:

գ. Կազմել մի խնդիր, որի լուծման համար հարկաւոր է իմանալ, թէ մի թիւ միւսի մէջ բանի անգամ է պարունակուում:

Ա Ն Դ Ր Ա Դ Ա Ր Զ Ո Ի Մ Ն

Անդրադարձումը մի գործողութիւն է, որով անուանական թւերի փոքր չափերը դարձնում ենք մեծ չափեր: Անդրադարձումը կատարւում է բաժանման գործողութեան միջոցով:

Օրինակ՝ 826 թերթը անդրադարձնել.

ա. Նախ 826 թ. դարձնել դաստա, բ. 34 դաստան դարձնել օգմա.

$$\begin{array}{r|l} 826 \text{ թ.} & 24 \text{ թերթ} \\ 72 & 34 \text{ դաստա} \\ \hline 1'06 & \\ 96 & \end{array}$$

„ 10 դաստա

$$\begin{array}{r|l} 34 \text{ դ.} & 20 \text{ դաստա} \\ 20 & 1 \text{ օգմա} \\ \hline 14 & \text{դաստա} \end{array}$$

826 թերթը = 1 օգմա, 14 դաստա, 10 թերթ:

Ա Ն Ղ Ր Ա Ղ Ա Ր Ա Ն Ե Ն

239. 505 սանտիմը
945 սանտիմը
807 սանտիմը
650 սանտիմը

240. 640 ըոպլեն
714 օրը
960 ամիսը
149 ժամը

241. 741 թերթը
479 դաստան
960 թերթը
999 թերթը

242. 542 գրանքան
715 գրանքան
804 գրանքան
918 գրանքան

243. 475 փոնգան (բաթմ.) 244. 743 գերլեն (գէազի)
863 փոնգան 445 գերլեն
652 բաթմանը 914 գերլեն
705 բաթմանը 815 փոնգան

245. 75 սանտիմը (շահիի) 246. 565 սանտիմետր (մետրի)
95 սանտիմը 702 սանտիմետրը
245 ղուանը (թումանի) 840 սանտիմետրը
791 ղուանը 791 սանտիմետրը

ԲԱԺԱՆՈՒՄ ԵՒ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ

$$\begin{array}{llll} 247. & 200 \times 2 : 4 = & 120 \times 4 : 10 = & 230 \times 4 : 2 = & 96 \times 5 : 6 = \\ & 400 \times 2 : 4 = & 240 \times 2 : 4 = & 330 \times 3 : 9 = & 58 \times 9 : 3 = \\ & 300 \times 3 : 9 = & 250 : 3 \times 5 = & 140 \times 3 : 6 = & 63 \times 8 : 4 = \\ & 500 \times 2 : 5 = & 180 \times 4 : 9 = & 270 \times 2 : 4 = & 72 \times 6 : 3 = \end{array}$$

$$\begin{array}{llll} 248. & 81 \times 9 : 3 = & 96 \times 9 : 6 = & 8 \times 458 : 4 = & 6 \times 135 : 3 = \\ & 85 \times 8 : 4 = & 79 \times 8 : 4 = & 8 \times 124 : 16 = & 7 \times 125 : 5 = \\ & 93 \times 7 : 3 = & 96 \times 9 : 6 = & 9 \times 106 : 18 = & 8 \times 109 : 4 = \\ & 78 \times 8 : 4 = & 85 \times 9 : 3 = & 3 \times 104 : 12 = & 5 \times 125 : 25 = \end{array}$$

$$\begin{array}{llll} 249. & 147 \times 6 : 4 = & (516 : 3) \times 4 = & (720 : 9) \times 8 = & (714 : 7) \times 8 = \\ & 272 \times 3 : 12 = & (648 : 4) \times 5 = & (432 : 3) \times 6 = & (648 : 8) \times 9 = \\ & 106 \times 9 : 18 = & (715 : 5) \times 6 = & (825 : 5) \times 4 = & (468 : 9) \times 7 = \\ & 244 \times 3 : 6 = & (726 : 6) \times 7 = & (324 : 3) \times 7 = & (549 : 9) \times 8 = \end{array}$$

$$\begin{array}{llll} 250. & (25 \times 26) : 10 = & (45 \times 18) : 9 = & (27 \times 15) : 5 = & (960 : 480) \times 87 = \\ & (18 \times 16) : 12 = & (58 \times 16) : 8 = & (28 \times 19) : 14 = & (630 : 90) \times 29 = \\ & (36 \times 19) : 18 = & (37 \times 18) : 9 = & (92 \times 4) : 46 = & (490 : 70) \times 35 = \\ & (23 \times 34) \div 17 = & (19 \times 48) \div 12 = & (76 \times 3) \div 38 = & (720 \div 240) \times 69 = \end{array}$$

251. Դերձակը գնեց 30 թուփ մահուդ. իւրաքանչիւր թուփը 24 գէազից. Բոլոր մահուդից նա կարեց 180 ձեռք զգեստ. Քանի գէազ մահուդ գործածեց իւրաքանչիւր ձեռք զգեստի համար:

252. Մի գիւղացի բանջարանոցից ստացաւ 489 բաթման գետնախնձոր, երկրորդը՝ 3 անգամ պակաս, իսկ երրորդը՝ 5 անգամ աւելի երկրորդից. Քանի բաթման գետնախնձոր ստացաւ երրորդ գիւղացին:

253. Մի խումբ բանւորներ կէս տարւայ համար պիտի ստանային 888 թուման. 4 ամիս յետոյ բանւորներին արձակեցին. Քանի թուման ստացան նրանք աշխատած ամիսների համար:

254. Առետրականը գնեց 858 ղոանի ապրանք. իւրաքանչիւր 30 բաթմանին վճարեց 390 ղոան. Գանի բաթման ապրանք գնեց նա.

255. Վաճառականը ծախեց 894 թումանի ապրանք. Գանի փութ էր նրա ապրանքը, եթէ իւրաքանչիւր 95 փութի համար ստանում էր 298 թուման.

256. Ճանապարհորդն անցաւ 680 կիլոմետր ճանապարհ. Առաջին 7 օրը նա անցաւ օրական 56 կիլոմետր, իսկ մնացած տարածութիւնը՝ օրական 48 կիլոմետր. Գանի օր նա ճանապարհորդեց.

257. Կտորեղէն վաճառողն ունէր 45 թոփ մահուղ. իւրաքանչիւր թոփը 18 գէաղից էր. Ունեցած մահուղի $\frac{1}{10}$ մասը ծախեց՝ գէաղը 12 ղոանով. Ո՞րքան արժէր ծախած մահուղը:

258. Մսավաճառը գնեց առաջին անգամ 72 ոչխար և վճարեց 288 թուման. երկրորդ անգամ՝ 98 ոչխար և իւրաքանչիւր ոչխարին 1 թուման աւելի վճարեց. Ո՞րքան վճարեց նա երկրորդ անգամ զնած ոչխարների համար:

259. Այգեպանը տնկեց 765 նշենի, զրանից 9 անգամ պակաս սալորենի, իսկ սալորենուց 11 անգամ աւելի խնձորենի. Գանի խնձորենի տնկեց.

260. Մէկ թոփ չիթը 32 գէաղ, 2 գերէ (փոնգա) է. Ո՞րքան կը լինի նոյն չիթի 18 թոփը.

261. Մի ձեռք զգեստ կարելու համար գործածեցին 4 գէաղ, 2 փոնգա (գերէ) կերպաս. Ո՞րքան կերպաս է հարկաւոր 67 ձեռք նման զգեստ կարելու համար:

262. Դերձակը գնեց 12 թոփ մահուղ, իւրաքանչիւր թոփը 19 գէաղ 3 փոնգա. Ո՞րքան վճարեց նա մահուղին, եթէ գէաղն արժէր 4 թուման:

Կազմեցէ՛ք խնդիրներ բազմապատկման եւ բաժանման գործողութիւններով.

ա. Կազմել մի խնդիր, որը լուծելու համար հարկաւոր լինի գտնել երկու թւերի արտադրեալը:

բ. Կազմել մի խնդիր, որը լուծելու համար պէտք լինի գտնել մի թւի հաւասար մասերից մէկը և այդ մասը մեծացնել 28 անգամ:

գ. Կազմել մի խնդիր, որը լուծելու համար պէտք լինի երկու թւերի գումարը մեծացնել 18 անգամ և ապա բաժանել 9-ի:

4 4

ԶՈՐՍ ԴՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

$$263. \quad (38 \times 8) + (162 \div 9) - 124 \quad (564 \div 4) + (86 \times 7) - 369 \\ (762 \div 6) + (139 \times 3) - 509 \quad (376 \div 8) - 38 + (139 \times 4)$$

$$264. \quad (208 \times 4) - (605 \div 5) - 169 \quad (624 \div 4) + (531 \div 3) + 89 \\ (416 \div 8) + (309 \times 2) - 509 \quad (96 \times 9) - 476 - (475 \div 5)$$

$$265. \quad (139 \times 6) - 697 + (576 \div 6) \quad (840 \div 8) + 149 - (785 \div 5) \\ (978 - (47 \times 4) - (87 \times 5)) \quad 900 - (35 \times 7) - (784 \div 4)$$

$$266. \quad (178 \times 5) - 298 - (639 \div 9) \quad (167 \times 6) - 789 - (798 \div 6) \\ 941 - (756 \div 7) - (824 \div 4) \quad 149 + (798 \div 7) - (810 \div 9)$$

$$267. \quad 893 - (349 + 408) + (963 \div 3) \quad 765 - (836 - 629) - (464 \div 8) \\ 923 - (962 - 837) - (369 \times 2) \quad 800 - (495 - 289) + (486 \div 9)$$

$$268. \quad 400 + (378 - 119) - (513 \div 9) = 800 - (572 - 189) - (712 \div 8) \\ (147 \times 6) - (816 - 349) + 128 \quad (178 \times 5) - (269 + 278) + 69$$

$$269. \quad (165 \times 4) - (782 - 398) - 117 = (233 \times 4) - (347 - 219) - 68 \\ (609 \div 3) + 479 - (573 - 189) = (512 \div 8) + 768 - (652 - 469)$$

270. $(672 \div 42) + (23 \times 37) - 387$ $(36 \times 23) + (742 \div 14) - 697$
 $(46 \times 12) + (578 \div 17) - 98$ $(413 \div 59) + (882 \div 63) + 647$
271. $(946 \div 43) - (960 \div 48) + 327$ $(6 \times 2) - (728 \div 14) - 689$
 $(888 \div 74) + (34 \times 26) - 729$ $(946 \div 70) + (8 \times 17) - 178$
272. $(882 \div 63) + (36 \times 14) + 98$ $(39 \times 22) - (994 \div 11) - 378$
 $(37 \times 26) - (43 \div 29) - 576$ $(46 \times 12) - (918 \div 18) - 120$
273. $800 - (840 \div 14) - (360 \div 45)$ $601 - (896 \div 28) - (312 \div 13)$
 $503 - (900 \div 12) - (722 \div 38)$ $397 + (897 \div 69) - (149 + 99)$
274. $[575 + 337] \div 19 + [987 \div 47]$ $[935 - 480] \div 35 + [24 \times 19]$
 $[888 - 405] \div 23 + [144 \div 18]$ $[723 - 476] \div 19 + [19 \times 18]$
275. $[(28 \times 14) - (14 \times 23)] \times 14 + (15 \div 3) =$
276. $[(27 \times 12) - (14 \times 22) + (300 \div 25)] \times 11 - (300 \div 12) =$

277. Տունը նորոգելու համար դործեցին 9 օր՝ 4 օրմնագիր, 12 բահուր, 3 հիւսն, Որմնագրի օրավարձն էր 8 ղուան, բահուրին՝ 3 ղուան, հիւսնին՝ 11 ղուան: Ո՞րքան վճարեց բոլորին:

278. Գործակատարը ծառայեց 20 տարի. սկզբի 7 տարիներում խնայեց աշխատանքի 3-ական թուման, իսկ յետոյ ամսական 5-ական թուման: Ո՞րքան ժամանակ կարող է ապրել իր խնայած փողով, եթէ ամսական ծախսէ 9 թուման:

279. Վաճառականը ծախեց 702 գէաղ չիթ, նրանից 18 անգամ պակաս քաթան՝ գէաղը 6 ղուանով: Ո՞րքան ստացաւ քաթանի համար:

280. Երեք խումբ բանւորներ աշխատեցին և ստացան 539 ղուան: Ո՞րքան կստանայ խմբերից իւրաքանչիւրը այդ գումարից, եթէ առաջին խմբի բանւորներին թիւն

է 15, երկրորդինը՝ 27, իսկ երրորդինը՝ 35 և եթէ բանւորների օրավարձը հաւասար է:

281. Մի բարեգործ կտակեց 864 թուման, որի $\frac{1}{3}$ մասը տուեց Բարեգործական միութեան, զրանից 79 թուման տուելի՝ Աղքատախնամ ընկերութեան, իսկ մնացածը զբոսայգիին: Ո՞րքան հասաւ զբոսայգիին:

282. Խանութպանը գնեց 3 զիւժին աթոռ և վճարեց 766 ղուան. փոխադրութեան համար ծախսեց 58 ղուան: Ո՞րքան շահեց իւրաքանչիւր աթոռից, եթէ բոլորը վաճառեց 968 ղուանով:

283. Կառքի առջևի անիւի շրջադասն է 3 մետր, իսկ յետևի անիւինը՝ 5 մետր: Ո՞րքանով աւելի պտոյտ կը գործի առջևի անիւը 405 մետր տարածութեան վրայ:

284. Դիւղացին ցանեց 145 բաթման ցորեն և ստացաւ մէկին հինգ հունձ: Ստացածից 3 խաւար 88 բաթման պահեց, իսկ մնացածը ծախեց՝ բաթմանը 2 ղուան 5 սմ: Ո՞րքան ստացաւ նա ծախած ցորենի համար:

285. Կարածատէրը 2 ձիու համար վճարեց 852 ղու: Ո՞րքան պէտք է վճարէ նա 3 կովի համար, եթէ կովը ձիուց երկու անգամ ւժան է:

286. Գնել են նշենու և ուռնու փայտ ու վճարել են 200 ղուան: Նշենու փայտի բաթմանն արժէ 55 սանտիմ, իսկ ուռնունը՝ 25 սմ. պակաս: Ո՞րքան է գնւած ուռնու փայտ, եթէ նշենուց գնւած է 2 խաւար:

287. Երեք աշակերտ գնեցին 7 ղաստա 18 թերթ թուղթ: Քանի թերթ ստացաւ նրանցից ամէն մէկը, եթէ առաջինը վճարեց 2 ղուան 10 շահի, երկրորդը՝ 3 ղուան 3 շահի, երրորդը՝ 3 ղուան 13 շահի:

288. Երկու արկղում 174 զրանքայ թէյ կար. երբ երկուսից հանեցին հաւասար քանակութեամբ թէյ, այն ժամանակ առաջինում մնաց 55 զրանքայ, իսկ երկրորդում՝ 49 զր: Ո՞րքան թէյ կար իւրաքանչիւր արկղում:

289. Երկու արկղում կայ 875 տետրակ. մէկում 6 անգամ աւելի է միւսից: Քանի տետրակ կայ իւրաքանչիւր արկղում:

290. Պրքան պէտք է վճարւի 65 ջալ ցորենի փոխադրութեան համար, եթէ մի ջալ ցորենի քաշն է 15 բաթման, իւրաքանչիւր սայլին կարելի է բարձել 195 բաթման և փոխադրութեան համար իւրաքանչիւր սայլին վճարուի է 35 դռ. 75 սանտիմ:

291. Անասնավաճառը մի ոչխարը գնում էր 69 դռանով, իսկ ծախում էր 84 դռան: Քանի ոչխար գնեց նա, եթէ ծախելուց 855 դռան վաստակեց:

292. Գիւղացին ունէր 6 ոչխար, 1 ձի և 1 կով. սրանց կերակրելու համար գնեց 59 բաթման 8 փոնգա խոտ: Քանի օր կը բաւականանայ գնած խոտը, եթէ մի ոչխարն ուտում էր օրական 6 փոնգա խոտ, ձին՝ 1 բաթման 2 փոնգա, իսկ կովը՝ 14 փոնգա:

ԺԱՄԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՃԻՒՆԵՐ

Յերեկն ու գիշերը միասին կազմում են մի օր, որը բաժանուի է 24 հաւասար մասերի, իւրաքանչիւր մասը կոչւում է ժամ: Օրն սկսւում է կէս գիշերուայ ժամը 12-ից: Օրը բաժանուի է երկու մասի՝ ցերեկ և գիշեր: Առաւօտեան ժամերը հաշւում են կէս գիշերուայ ժամը 12-ից և տեւում են մինչև կէսօրուայ ժամը 12-ը: Երեկոյեան ժամերը հաշւում են կէսօրուայ ժամը 12-ից և տեւում են մինչև կէսգիշերուայ ժամը 12-ը:

Ժ ա մ ա ն ա կ ի չ ա փ ե ռ

Հառարակ տարին=365 օրի:	Չաբաթն ունի 7 օր:
Նահանջ տարին=366 օրի:	Օրը = 24 ժամի:
Ցարին ունի 12 ամիս:	Ժամը = 60 րոպէի:
Ամիսն ունի 30 կամ 31 օր:	Րոպէն = 60 վայրկեանի:
Տարին = 52 շաբաթուայ և 1 կամ 2 օրի:	

ԱՄԻՍՏԵՐԻ ՈՒՆԵՆ ՏԱՐԵՐ ԲԱՆԱԿՈՒՅԻԱՄԸ ՕՐԵՐ

Յունւարը	= 31 օրի.		
Փետրւարը	= 28 օրի, իսկ նահանջ տարւանը՝ 29 օրի:		
Մարտը	= 31 „	Օգոստոսը	= 31 օրի.
Ապրիլը	= 30 „	Սեպտեմբերը	= 30 „
Մայիսը	= 31 „	Հոկտեմբերը	= 31 „
Յունիսը	= 30 „	Նոյեմբերը	= 30 „
Յուլիսը	= 31 „	Դեկտեմբերը	= 31 „

293. Քանի ժամ է անցել օրւայ սկզբից մինչև՝ ա. երեկոյեան ժամի 5-ը. բ. առաւօտեան ժամի 11-ը. գ. երեկոյեան ժամի 10-ը:

294. Ժամը քանիսն է, եթէ կէս գիշերից անցել է՝ ա. 5 ժամ, բ. 8 ժամ 30 րոպէ, գ. 20 ժամ:

295. Առաւօտեան ժամի 10-ը և 20 րոպէն է. Քանի ժամ է անցել՝ ա. օրւայ սկզբից, բ. առաւօտեան ժամի 5-ից, գ. երեկոյեան ժամի 11-ից:

296. Երեկոյեան 3 ժամ 45 րոպէն է. Քանի ժամ է մնում օրը վերջանայ և օրւայ սկզբից քանի ժամ է անցել:

297. Ո՞րքան ժամանակ է անցել՝ ա. հինգշաբթի օրւայ առաւօտեան ժամի 6-ից մինչև ուրբաթ օրւայ երեկ. ժամի 2-ը. բ. կիրակի օրւայ երեկոյեան ժամի 7-ից մինչև երեքշաբթի օրւայ առաւօտեան ժամի 11-ը:

298. Քանի ամիս և օր է անցել տարւայ սկզբից մինչև ա. մարտի 6-ը, բ. մայիսի 28-ը, գ. յունիսի 15-ը:

299. Քանի ամիս և օր է անցել՝ ա. մայիսի 28-ից մինչև յունիսի 13-ը. բ. փետրւարի 18-ից մինչև ապրիլի 2-ը. գ. յուլիսի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ը:

300. Ժամի քանիսն է՝ եթէ օրւայ սկզբից անցել է՝ ա. 15 ժամ 20 րոպէ, բ. 10 ժամ 10 րոպէ, գ. 14 ժամ

45 րոպէ, դ. 17 ժամ 35 րոպէ, ե. 22 ժամ 15 րոպէ:

301. Ո՞ր ամիս և թիւն է՝ եթէ հասարակ տարւայ սկզբից անցել է 216 օր, 85 օր, 146 օր, 208 օր, 298 օր:

302. Դպրոցի ամառային արձակուրդն սկսեց յունիսի 5-ից և տևեց 96 օր: Ե՞րբ վերսկսեցին դասերը:

303. Երկաթուղու գնացքը մեկնում է Երեկոյեան 11 ժամ 15 րոպէին. և տեղ է հասնում 8 ժամ 20 րոպէից յետոյ: Ո՞ր ժամին է տեղ հասնում:

304. Մեր դպրոցում պարապմունքներն սկսեցին սեպտեմբերի 10-ին և վերջացան հետևեալ տարւայ մայիսի 30-ին: Ո՞րքան ժամանակ տևեցին պարապմունքները:

305. Աշակերտները դպրոց եկան առաւօտեան 8 ժամ 25 րոպէին և 4 ժամ 15 րոպէ պարապեցին: Ո՞ր ժամին տուն վերադարձան:

306. Եկեղեցիների 22-ին արևը ծագում է 7 ժամ 19 րոպէին և մայր է մտնում 4 ժամ 36 րոպէին: ա. Ո՞րքան է տևում ցերեկը: բ. Ո՞րքան է տևում գիշերը:

307. Երեխան անկողին մտաւ քնելու երեկոյեան 7 ժամ 25 րոպէին և արթնացաւ առաւօտեան 9 ժամ 15 րոպէին: Քանի ժամ էր քնել նա:

308. Սուրհանդակը Ռաշտից Փահլաւի մեկնեց ուրբաթ օրը առաւօտեան 7 ժամ 20 րոպէին և վերադարձաւ շաբաթ օրը երեկոյեան 6 ժամ 40 րոպէին: Քանի ժամ բացակայեց:

309. Ճանապարհորդը Ղազինից մեկնեց երկուշաբթի առաւօտեան ժամի 8-ին և 4 օր 18 ժամ 30 րոպէ ճանապարհ գնալուց յետոյ հասաւ Ռաւրիգ: Ո՞ր օրը և ո՞ր ժամին տեղ հասաւ:

310. Շոգենաւը տեղ հասաւ առաւօտեան 3 ժամ 10 րոպէին: Ե՞րբ նա մեկնեց առաջին նաւահանգստից, եթէ այդ նաւահանգստների միջի տարածութիւնն անցաւ 8 ժամ 30 րոպէում:

ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱԺԱՆԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա.

311. 38 ձմերուկն արժէ 45 դրան 60 սանտիմ. իսկ 32 սելը՝ 51 դրան 20 սանտիմ: Ո՞րքան կարժենայ 20 ձմերուկը եւ 10 սելը միասին:

Լ ու ծ ու մ ն

ա. Քանի արժէ մի ձմերուկը:

$$45 \text{ դր. } 60 \text{ սմ. } \div 38 = 1 \text{ դր. } 20 \text{ սմ.}$$

բ. Քանի արժէ մի սելը:

$$51 \text{ դր. } 20 \text{ սմ. } \div 32 = 1 \text{ դր. } 60 \text{ սմ.}$$

գ. Ո՞րքան արժէ 20 ձմերուկը:

$$1 \text{ դր. } 20 \text{ սմ. } \times 30 = 24 \text{ դրան.}$$

դ. Ո՞րքան արժէ 10 սելը:

$$1 \text{ դր. } 60 \text{ սմ. } \times 10 = 16 \text{ դրան.}$$

ե. Ո՞րքան արժեն 20 ձմերուկը և 10 սելը միասին:

$$24 \text{ դր. } + 16 \text{ դր. } = 40 \text{ դրանի:}$$

Պատասխան՝ 40 դրան.

312. Մի բանուր 5 օր աշխատելով ստացաւ 12 դր. 50 սմ.: Ո՞րքան կստանայ նա նոյն ժամանակամիջոցում, եթէ օրավարձը 25 սանտիմով պակաս լինի:

313. 15 ձին մի շաբաթում ուտում են 105 բաթման գարի: Ո՞րքան գարի կուտեն նոյն ժամանակամիջոցում 8 ձին:

314. Երկաթուղու գնացքը 14 ժամում անցաւ 532 կիլոմետր տարածութիւն: Ի՞նչ տարածութիւն կանցնի այդ գնացքը 18 ժամում, եթէ ժամը 3 կիլոմետր անի անցնի:

315. 18 վարպետ 15 օրում մի տուն շինեցին: Քանի օրում 30 վարպետ կարող են շինել 8 անգամ մեծ տունը:

316. 11 մշակը 14 օրում, բանելով օրական 6 ժամ, վերջացրին մի գործ: Քանի օրում նոյն գործը կը վեր-

ջացնեն 6 մշակը, եթէ բանելու լինեն օրական 7 ժամ:

317. 15 բանուոր կերակրելու համար 32 օրում զոր-
ծածեցին 960 փոնգա ալիւր: Քանի օր կը բաւականանայ
24 բաթման ալիւրը 12 բանուոր կերակրելու համար:

318. 12 հնձուր օրական 8 ժամ աշխատելով մի
արտ հնձեցին 5 օրում: Քանի օրում կը հնձնեն նոյն արտը
4 հնձուրը, եթէ աշխատեն օրական 12 ժամ:

Բ.

319. Ալիւրավաճառը խառնեց 38 բաթման, բաթմանը՝
2 ղո. 20 սմ. ալիւրը, 81 բաթման, բաթմանը՝ 1 ղո. 80 սան-
տիմանոց ալիւրի հետ: Ո՞րքանով է ծախելու այդ խառնուրդի
բաթմանը, որպէսզի ամբողջ խառնուրդից վաստակի 62 ղո. 15 ս:

Լ ռ ծ ու մ ն

ա. Ո՞րքան արժէ 38 բաթման ալիւրը.

$$2 \text{ ղո. } 20 \text{ սմ. } \times 38 = 83 \text{ ղո. } 60 \text{ սմ.}$$

բ. Ո՞րքան արժէ 81 բաթման ալիւրը.

$$1 \text{ ղո. } 80 \text{ սմ. } \times 81 = 145 \text{ ղո. } 80 \text{ սմ.}$$

գ. Ո՞րքան արժէ երկու տեսակ ալիւրը.

$$83 \text{ ղո. } 60 \text{ սմ. } + 145 \text{ ղո. } 80 \text{ սմ. } = 229 \text{ ղո. } 40 \text{ սմ.}$$

դ. Քանի բաթման ալիւր ունէր խանութպանը.

$$38 \text{ բ. } + 81 \text{ բ. } = 119 \text{ բաթ.}$$

ե. Ո՞րքան զրամ կստանար վաճառելու գէպքում.

$$229 \text{ ղո. } 40 \text{ սմ. } + 62 \text{ ղո. } 15 \text{ սմ. } = 291 \text{ ղո. } 55 \text{ սմ.}$$

զ. Ո՞րքանով է ծախելու խառնուրդի բաթմանը.

$$291 \text{ ղո. } 55 \text{ սմ. } \div 119 = 2 \text{ ղո. } 45 \text{ սմ.}$$

$$\text{Պատասխան՝ } 2 \text{ ղո. } 45 \text{ սմ.}$$

320. Թէյավաճառը խառնեց 52 զրանբայ, զրան-
բան՝ 8 ղոանանոց թէյը 68 զրանբայ, զրանբան՝ 6 զր-
անանոց թէյի հետ: Այդ խառնուրդը ծախելուց 104 զր-
ան վնասուեց, Քանիսով էր ծախել խառնուրդի զրանբան:

321. Մրգավաճառը 94 բաթման, փոնգան 15 սան-
տիմանոց խաղողը խառնեց 32 բաթման խաղողի հետ:
Խառնուրդի փոնգան ծախեց 20 սանտիմով: Ամբողջ խառ-
նուրդից վաստակեց 126 ղո. 40 սմ.: Ո՞րքան արժէր երկ-
րորդ տեսակի խաղողի փոնգան:

322. Գինեվաճառը խառնեց 72 շիշ, շիշը 3 ղոանա-
նոց լաւ գինին 15 շիշ ջրի հետ: Ո՞րքան օգուտ կամ վը-
նաս կունենայ, եթէ խառնուրդի շիշը ծախի 2 ղոան
50 սանտիմով:

323. Խանութպանը խառնեց 15 բաթման, բաթմանը
20 ղոանանոց իւղը, 9 բաթման, բաթմանը 12 ղոանա-
նոց դմակ իւղի հետ: Ո՞րքանով պէտք է ծախի խառ-
նուրդի բաթմանը, որպէսզի ոչ օգուտ լինի, ոչ վնաս:

324. Խառնեցին 12 զրանբայ, զրանբան 2 ղոանա-
նոց սուրճը, 7 զրանբայ ուրիշ տեսակ սուրճի հետ, որի
զրանբան արժէր 3 ղոան: Ո՞րքանով պէտք է ծախի
խառնուրդի զրանբան, որպէսզի 2 ղո. 50 սմ. վաստակի:

Գ.

325. Վաճառականը գնեց մի գիւղացուց 35 բաթման
նուշ, իսկ մի ուրիշ գիւղացուց նոյն գնով 48 բաթման նուշ:
Ո՞րքան փող ստացաւ իւրաքանչիւր գիւղացին, եթէ երկրորդը
156 ղոան աւելի ստացաւ:

Լ ռ ծ ու մ ն

ա. Քանի բաթմանով աւելի էր երկրորդ գիւղացու նուշը.
48 բ. — 35 բ. = 13 բաթ.

Ուրեմն 13 բաթման նուշի համար երկրորդ գիւղացին
ստացել էր 156 ղոան աւելի:

բ. Ո՞րքան արժէր նուշի բաթմանը.
156 ղո $\div$ 13 = 12 ղոան:

գ. Ո՞րքան ստացաւ առաջին գիւղացին.
12 ղո. $\times$ 35 = 420 ղոան:

դ. Ո՞րքան ստացաւ երկրորդ գիւղացին.

$$12 \text{ դռ.} \times 48 = 576 \text{ դռան.}$$

$$\text{կամ՝ } (420 \text{ դռ.} + 156 = 576 \text{ դռան}).$$

Պատասխան՝ 576 դռան.

326. Մի թոփ մահուդը ուզում էին ծախել 875 դր-
ռանով. եթէ այդ թոփից առաջուց կտրած չլինէին 17
մետր, այն ժամանակ կարող էին ծախել 994 դռանով:
Քանի մետր էր ամբողջ թոփը:

327. Վաճառականն առաջին անգամ 795 դռանով
գնեց 12 հատ աղւեսի մորթի և 15 հատ գայլի մորթի.
երկրորդ անգամ գնեց 12 աղւեսի ու 23 գայլի մորթի և
վճարեց 995 դռան. Որոշել աղւեսի և գայլի մորթու-
արժէքները:

328. Խանութպանն ուզում էր գնել մի արկղ նա-
րինջ, որն արժէր 23 դռ. 80 սմ., բայց նա վճարեց ընդա-
մենը 18 դռ. 40 սմ., զքա համար էլ 27 նարինջ պակաս
ստացաւ: Քանի հատ նարինջ կար արկղում:

329. Աշակերտը 25 հատ մատիտ գնեց, գրպանում
մնաց 45 սանտիմ. եթէ նա գնելու լինէր նոյն մատիտնե-
րից 28 հատ, այն ժամանակ նա ծախսած կը լինէր իր
մօտ ունեցած զբամբ: Ո՞րքան փող ունէր նա գրպանում:

330. Դերձակը գնեց 18 գէազ մահուդ և իր մօտ մը-
նաց 28 դռան: Եթէ նա գնելու լինէր նոյն մահուդից 14
գէազ, այն ժամանակ իր մօտ կը մնար 208 դռան. Ո՞ր-
քան վճարեց գնած մահուդին:

331. Տանտէրը գնեց մի քանի աթոռ, հատը 15 դր-
ռանով, նրա մօտ մնաց 42 դռան, իսկ եթէ նա աթոռի
հատը գնէր 18 դռանով, նրա մօտ փող չէր մնայ: Քանի
աթոռ գնեց նա:

Դ.

332. Մի բանուր վարձեցին այն պայմանով, որ օրական
ստանայ 4 դռ. աշխատավարձ, իսկ չբանած օրերն ինքը վճա-
րէ օրական 2 դռ.: Երկու շաբաթից յետոյ բանուրը հեռանալիս
ստացաւ ընդամենը 30 դռ.: Բանի՞ օր քանեց նա:

Լ ու ծ ու մ ն

ա. Ո՞րքան կստանար, եթէ աշխատէր երկու շաբաթ-
ւայ ընթացքում ամէն օր. (Աշխատանքի շաբաթը=6 օր)
 $4 \text{ դռ.} \times 12 = 48 \text{ դռ.}:$

բ. Ո՞րքան փող կորցրեց չբանած օրերի համար.
 $48 \text{ դռ.} - 30 \text{ դռ.} = 18 \text{ դռ.}:$

գ. Ո՞րքան փող էր կորցնում ամէն մի չբանած օրը.
 $2 \text{ դռ.} + 4 \text{ դռ.} = 6 \text{ դռ.}:$

դ. Քանի օր չբանեց նա.
 $18 \text{ դռ.} \div 6 \text{ դռ.} = 3 \text{ օր}:$

ե. Քանի օր բանեց նա.
 $12 \text{ օր} - 3 \text{ օր} = 9 \text{ օր}:$

Պատասխան՝ 9 օր բանեց.

333. Արհեստաւորը պայմանաւորուել էր աշխատած
օրերի համար ստանալ 12 դռան, իսկ չաշխատելու դէպ-
քում ինքը վճարէ 4 դռան: Քանի օր գործեց նա, եթէ
16 օրից յետոյ ստացաւ 160 դռան:

334. Տպարանատէրը պայմանաւորուել էր գրքի իւրա-
քանչիւր տպագրւած երեսի համար ստանալ 6 դռ., պայ-
մանով, որ շաբաթական յանձնի 32 տպագրւած երես.
պայմանը չկատարելու դէպքում պարտաւոր էր պակաս
տպագրւած երեսի համար վճարել 5 դռան: 5 շաբաթից
յետոյ ստացաւ 520 դռան: Քանի տպագրւած երես
յանձնեց:

335. Մէկը պայմանաւորուեց տեղափոխել 35 լամպ,

հատը 20 սանտիմով, իսկ կոտրելու դէպքում պարտաւորւեց իւրաքանչիւրի համար վճարել 65 սանտիմ, տեղափոխելուց յետոյ նա ստացաւ 3 դռ. 60 սանտիմ. Քանի հատ լամպ նա տեղափոխեց առանց կոտրելու:

336. Եղբայրը առաջարկեց քրոջը լուծել 27 խնդիր հետեւեալ պայմանով. իւրաքանչիւր ճիշտ լուծած խնդրի համար եղբայրը վճարելու էր քրոջը 10 սանտիմ. իսկ իւրաքանչիւր չլուծած խնդրի համար քոյրը վճարելու էր եղբորը 5 սանտիմ. Քանի խնդիր լուծեց քոյրը, եթէ նա իր եղբորից ստացաւ ընդամենը 1 դռ. 50 սմ.:

337. Բանւորը ստանում էր 5 դռան օրավարձ, իսկ ծախսում էր օրական 2 դռան. երեք շաբաթ յետոյ նա խնայեց 23 դռան. Քանի օր էր աշխատել բանւորը:

338. Հիւանդ պայմանաւորուեց դպրոցի համար պատրաստել 30 հատ աշակերտական գրասեղան, հատը 25 դռ. 25 սմ. իսկ որոշւած ժամանակին չպատրաստելու դէպքում վճարել իւրաքանչիւր գրասեղանի համար 10 դռ. 50 սմ.: Ժամանակին չյանձնելու պատճառով ստացաւ ընդամենը 397 դռ. 75 սմ.: Քանի գրասեղան յանձնեց:

339. Խանութպանը գնեց 80 հատ բաժակ, հատը 30 սանտիմով. տեղափոխելիս մէկ ու կէս դիւթինը կոտրւեց. Ո՞րքանով է ծախելու մնացած բաժակները, որպէսզի 3 դռ. 90 սմ. վաստակի:

Ե.

340. 765 խալար փայտ տեղափոխելու համար առաջին անգամ վարձեցին 27 սայլ, իսկ 5 օրից յետոյ 13 սայլ եւս: Քանի՞ օրում տեղափոխեցին բոլոր փայտը, եթէ իւրաքանչիւր սայլ օրական տեղափոխում էր 3 խալար:

Լ ու ծ ու մ ն

ա. Ո՞րքան փայտ տեղափոխեցին 1 օրում 27 սայլով.
3 խալ. $\times 27 = 81$ խալար:

բ. Ո՞րքան փայտ տեղափոխեցին 5 օրում 27 սայլով.
81 խալ. $\times 5 = 405$ խալար:

գ. Քանի սայլով էին տեղափոխում 5 օրից յետոյ.
27 սայլ $+ 13$ ս. $= 40$ սայլ:

դ. Ո՞րքան փայտ մնաց 40 սայլով տեղափոխելու համար.
765 խալ. $- 405$ խ. $= 360$ խալ.

ե. Ո՞րքան փայտ են տեղափոխում 40 սայլով մի օրում.
3 խալ. $\times 40 = 120$ խալար:

զ. Քանի օրում տեղափոխեցին մնացած փայտը 40 սայլով.
360 խալ. $\div 120$ խ. $= 3$ օրում:

է. Քանի օրում տեղափոխեցին բոլոր փայտը.
5 օր $+ 3$ օր $= 8$ օր:

Պատասխան՝ 8 օրում.

341. 620 ծառ կտրելու համար վարձեցին 8 բանւոր. գործը արագացնելու համար 4 օրից յետոյ վարձեցին 7 բանւոր եւս. Քանի օրում կտրեցին բոլոր ծառերը, եթէ իւրաքանչիւր բանւոր օրական կտրում էր 10 ծառ:

342. 818 թերթից բաղկացած մի ձեռագիր արտագրելու համար վարձեցին 2 գրագիր. 10 օրից յետոյ աւելացրին 2 գրագիր եւս. Քանի օրում արտագրւեց այդ ձեռագիրը, եթէ առաջին երկու գրագիրներից իւրաքանչիւրն օրական արտագրում էր 13 թերթ, իսկ վերջին գրագիրներից իւրաքանչիւրը՝ 18 թերթ:

343. 880 էջից բաղկացած գրքից ուսուցիչը մի ժամում կարդում է 35 էջ: Քանի օրում կաւարտի գրքի ընթերցումը, եթէ երկու օրից յետոյ կարդում է ժամը 30 էջ եւ եթէ օրական ընթերցանութեամբ է պարապում 4 ժամ:

344. Փայտավաճառը սայլերով 305 խալար փայտ ստացաւ. Սայլերը դադարկելու համար վարձեց 25 բանւոր. գործը շուտ վերջացնելու համար, 3 ժամից, երբ սայլերում մնացել էր ընդամենը 230 խալար փայտ, նա

վարձեց մի քանի բանուր ևս. մնացած փայտը բոլոր բանուրները միասին դադարեցին 5 ժամում. Գանի բանուր վարձեց փայտավաճառն երկրորդ անգամ:

345. 570 գէազ երկարութեամբ մի առու փորելու համար վարձեցին 12 բանուր. 7 օրից յետոյ վարձեցին 3 բանուր ևս. Գանի օրում կը վերջացնեն այդ գործը, եթէ իւրաքանչիւր բանուր օրական փորում էր 5 գէազ երկարութեամբ առու.

Զ.

346. Գտնել՝ 96-ի $\frac{1}{2}$ -ը, $\frac{1}{3}$ -ը, $\frac{1}{4}$ -ը, $\frac{1}{6}$ -ը, $\frac{1}{8}$ -ը.

347. Գտնել՝ 48-ի $\frac{2}{3}$ -ը, $\frac{3}{4}$ -ը, $\frac{5}{6}$ -ը, $\frac{3}{8}$ -ը, $\frac{7}{8}$ -ը.

348. Գտնել՝ 84-ի $\frac{1}{3}$ -ը, $\frac{3}{7}$ -ը, $\frac{13}{21}$ -ը, $\frac{7}{12}$ -ը, $\frac{9}{28}$ -ը:

349. Քանի ժամ է՝ $\frac{1}{3}$, $\frac{2}{3}$, $\frac{1}{4}$, $\frac{3}{4}$, $\frac{3}{8}$, $\frac{5}{12}$ օրը.

350. Քանի րոպէ է՝ $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{3}$, $\frac{3}{4}$, $\frac{2}{3}$, $\frac{5}{6}$ ժամը.

351. Քանի ամիս է՝ $\frac{1}{2}$, $\frac{1}{3}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{6}$, $\frac{2}{3}$, $\frac{3}{4}$, $\frac{7}{12}$ տարին:

352. Քանի թերթ թուղթ է՝ $\frac{1}{3}$, $\frac{2}{3}$, $\frac{3}{4}$, $\frac{5}{8}$ դաստան:

353. Քանի գրանքայ է՝ $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{3}{4}$, $\frac{1}{5}$, $\frac{3}{5}$, $\frac{5}{8}$, $\frac{7}{8}$ փութը.

354. Քանի փոնգա է՝ $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{8}$, $\frac{1}{16}$, $\frac{3}{4}$, $\frac{5}{8}$ բաթմանը.

355. Քանի՞ բաթման է՝ $\frac{1}{2}$, $\frac{1}{5}$, $\frac{1}{10}$, $\frac{3}{5}$, $\frac{7}{10}$, $\frac{3}{25}$ խալարը:

356. Քանի՞ շահի է՝ $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{5}$, $\frac{3}{4}$, $\frac{4}{5}$ զուանը:

357. Քանի զուան է՝ $\frac{1}{2}$, $\frac{1}{5}$, $\frac{2}{5}$, $\frac{3}{5}$, $\frac{4}{5}$, $\frac{3}{10}$ թումանը.

358. Քանի գերէ է՝ $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{8}$, $\frac{3}{4}$, $\frac{5}{8}$, $\frac{7}{16}$ գէազը:

359. Քանի՞ սանտիմետր է՝ $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{5}$, $\frac{3}{20}$, $\frac{3}{100}$, $\frac{15}{100}$ մետրը.

360. Աշակերտն ունէր 45 սմ., այդ փողի $\frac{4}{9}$ -ով մի տետրակ գնեց, Ի՞նչ արժէ տետրակը:

361. Մի բաթման միսն արժէ 6 զռ. 40 սմ.: Ո՞րքան արժէ $\frac{1}{16}$, $\frac{3}{16}$ բաթման միսը.

362. Գիւղացին ունէր 420 զուան, որի $\frac{5}{7}$ -ով նա գնեց մի կով. իսկ մնացածով՝ 2 ոչխար. Ո՞րքան արժէր մի ոչխարը:

363. Աշակերտը դպրոցում մնում էր օրւայ $\frac{1}{6}$ մասը, տանը գրադուում էր 4 ժամ, քնում էր՝ $\frac{5}{12}$ օր. Քանի ժամ էր մնում խաղալու:

364. Առևտրականը 120 զուանով գնեց $\frac{3}{8}$ փութ թէյ. Բոլոր թէյը ծախելուց 15 զուան վաստակեց. Քանիսով ծախեց նա թէյի գրանքան:

365. Խանութպանը գնեց $\frac{4}{5}$ խալար նուշ, բաթմանը $\frac{9}{10}$ ~~գրանքան~~ ^{բաթման} Ո՞րքանով պէտք է վաճառի նուշի բաթմանը, որ բոլորի մէջ շահի 24 թուման:

366. Դպրոցի 3 դասարաններում կային 96 աշակերտ. երրորդ դասարանի աշակերտների թիւը հաւասար էր ամբողջի $\frac{1}{6}$ -ին, երկրորդ դասարանինը՝ ամբողջի $\frac{3}{8}$ -ին. իսկ մնացածը առաջին դասարանի աշակերտներ էին. Քանի՞ աշակերտ կար առաջին դասարանում:

367. Ուսուցիչը մի տարւայ ընթացքում աշակերտներին բաժանեց 840 թերթ թուղթ. առաջին բաժանմունքն ստացաւ ամբողջի $\frac{2}{5}$ -ը, երկրորդ բաժանմունքը՝ մնացորդի $\frac{7}{12}$ -ը, իսկ երրորդ բաժանմունքը՝ մնացածը. Քանի՞ թերթ թուղթ ստացաւ իւրաքանչիւր բաժանմունքը:

Է.

368. Պահարանում եղած հայերէն գրքերի $\frac{2}{9}$ -ը հաւասար է 46-ի: Բանի՞ գիրք կայ պահարանում:

Լ. Ո Ւ Ժ Ո Ւ Մ Ն

$\frac{2}{9}$ -ը հաւասար է 46-ի.

ա. Ո՞րքան է գրքերի $\frac{1}{9}$ -ը.

46 գ. $\div 2 = 23$ գիրք:

բ. Քանի՞ հատ են բոլոր գրքերը.

23 գ. $\times 9 = 207$ գիրք:

Պատասխան՝ 207 գիրք.

369. Ո՞րքան պարտք ունի գիւղացին, եթէ նրա պարտքի $\frac{5}{14}$ -ը հաւասար է 35-ի: *10 ու 5 աճ/ո:*

370. 20-ը ո՞ր թւի $\frac{2}{3}$, $\frac{4}{5}$, $\frac{5}{7}$, $\frac{5}{12}$ -ն է կազմում:

371. Խանութում եղած գինու $\frac{3}{5}$ -ին, եթէ աւելացնենք 48 շիշ, խանութում կը լինի 75 շիշ գինի: Քանի՞ շիշ գինի կար խանութում:

372. Տուփի մէջ կար 75 գրչածայր, որը կազմում էր խանութում գտնւած գրչածայրերի $\frac{5}{7}$ -ը: Քանի՞ գրչածայր կար խանութում:

373. Եղբայրն ունեցած փողերի $\frac{9}{15}$ -ը տւեց քրոջը. իր մօտ մնաց 30 սանտիմ: Ո՞րքան փող ունէր եղբայրը:

374. Աշակերտն իր ունեցած փողերի $\frac{8}{9}$ -ով 2 հատ գիրք գնեց, հատը 20 շահիով: Քանի՞ սանտիմ մնաց նրա մօտ:

375. Եթէ մի թոփ մահուդի երկարութիւնից կրտրենք $\frac{7}{12}$ -ը, կը մնայ 20 գէազ: Քանի՞ գէազ էր ամբողջ թոփը:

376. Աշակերտը գրքից կարդաց 66 երես, որը ամբողջ գրքի $\frac{3}{8}$ մասն էր: Քանի՞ երես մնաց կարդալու:

II Մ Ա Ս

ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

Թ Ի Ա Ր Կ Ո Ի Թ Ի Ի Ն

ՀԱՋԱՐՆԵՐԻ ԴԱՍ.— Տասը հարիւրը կազմում է մի հազարաւոր, որին անւանում ենք հազար և գրում ենք չորրորդ կարգում:

Հազարաւորները համարւում են միաւորների նման. այսպէս՝ մէկ հազար, երկու հազար, երեք հազար, չորս հազար, հինգ հազար և այլն:

Գրւում է այսպէս.— 1000, 2000, 3000, 4000, 5000, 6000, 7000, 8000, 9000:

Տաս հազարը կազմում է մի նոր կարգ, որը կոչւում է տաս հազարաւորի կարգ և գրւում է 5-րդ տեղը:

Տաս հազարաւորները հետեւեալներն են.— Տաս հազար, քսան հազար, երեսուն հազար, քառասուն հազար, յիսուն հազար և այլն:

Գրւում է այսպէս.— 10000, 20000, 30000, 40000, 50000, 60000, 70000, 80000, 90000:

Հարիւր հազարը դառնում է մի նոր թւակարգ, որը կոչւում է հարիւրհազարաւոր և գրւում է վեցերորդ կարգում. այսպէս՝ 100000, 200000, 300000, 400000, 500000, 600000, 700000, 800000, 900000:

Կարգում ենք. — հարիւր հազար, երկու հարիւր հազար, երեք հարիւր հազար, չորս հարիւր հազար և այլն.
Տաս հարիւր հազարին ասում ենք միլիոն, գրում է այսպէս՝ 1000000.

Հազարաւորների դաս			Միութիւնների դաս		
VI-րդ կարգ	V-րդ կարգ	IV-րդ կարգ	III-րդ կարգ	II-րդ կարգ	I-ին կարգ
Հարիւր հազարաւոր	Տաս հազարաւոր	Հազարաւորներ	Հարիւրներ	Տասնաւորներ	Միաւորներ

Հազարաւորը, տաս հազարաւորը, հարիւր հազարաւորը կազմում են մի դաս, որը կոչւում է հազարաւորների դաս:

- ա. Հաշիւը հազարներով մինչև տաս հազար:
բ. Հաշիւը տաս հազարներով մինչև հարիւր հազար:
գ. Հաշիւը հարիւր հազարներով մինչև միլիոն:
դ. Նոյն վարժութիւնները կատարիւր աստիճանաբար իջնելով տաս հազարից հազարներով մինչև մէկ հազար, հարիւր հազարից տաս հազարներով մինչև տաս հազար և միլիոնից հարիւր հազարներով մինչև հարիւր հազար:
ե. Հաշիւը հազարներով մինչև հարիւր հազար և հազարաւոր իջիւր:
զ. Հազարից երկու հազարով, երեք հազարով, չորս հազարով և այլն, հաշիւը մինչև հարիւր հազար և իջիւր:
է. Հաշիւը հարիւր հազարից տաս հազարով մինչև երկու հարիւր հազար, երեք հարիւր հազար, չորս

հարիւր հազար, հինգ հարիւր հազար և այլն...
մինչև միլիոն:
ը. Նոյն հաշիւն արա տաս հազարներ իջնելով միլիոնից:

Կարդալ այս աղիսակի բւերը.

III դաս			II դաս հազարներ			I դաս միութիւններ			Գրում է
Ե. կարգ միլիոն	Զ. կարգ հարիւր հազարաւոր	Ե. կարգ տաս հազարաւոր	Զ. կարգ հազարաւոր	Է. կարգ հարիւր տասնաւոր	Ե. կարգ տասնաւոր	Զ. կարգ միաւոր	Է. կարգ միաւոր	Զ. կարգ միաւոր	
			1	1	1	1			1111
			2	3	4	4			2344
			3	5	6	—			3560
			5	6	—	5			5605
		1	1	4	—	—			11400
		2	7	—	—	—			27000
		6	8	—	—	4			68004
		9	—	3	—	—			90300
1	1	1	—	—	—	—			111000
2	5	7	8	6	9				257869
5	4	4	7	3	—				544730
9	5	—	—	8	5				950085
9	—	—	—	—	2				900002
1	—	—	—	—	—				1000000

Հետեւեալ բւերը դասերի բաժանիւր եւ կարդալ.

2760	5742	15673	59486	10048	25701
86514	39863	48941	62062	10480	90306
40091	71860	80098	314256	541879	363000
540000	600000	318210	307000	578010	981374

Գրիբ հետեւեալ բւերը բաճեցանքնելով

Հազար ութհարիւր երեսունչորս, երկուհազար վաթսուներեք, չորսհազար վեցհարիւր եօթանասուն, իննսուն հազար երեքհարիւր քսանչորս, ութսուներեքհազար եօթհարիւր քսանմէկ հազար ութհարիւր երեսուն վեց, հինգ հարիւր վաթսուն հազար եօթհարիւր քսան, եօթհարիւր հինգհազար վեցհարիւր իննսուն երեք, հարիւր քսանչորս հազար հինգհարիւր յիսունութեկ և այլն:

ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԹԻԱՐԿՈՒԹԻՒՆ

Որեւէ կարգի միութիւնից տաս հատ վերցնելով կարող ենք կազմել իրենից մի աստիճան բարձր մի նոր թուակարգի միութիւն:

Առաջին կարգի (միաւոր) տաս միութիւնից կազմում ենք երկրորդ կարգի (տասնաւոր) մէկ միութիւն:

Երկրորդ կարգի տաս միութիւնից կազմում ենք երրորդ կարգի (հարիւրաւոր) մէկ միութիւն:

Երրորդ կարգի տաս միութիւնից կազմում ենք չորրորդ կարգի (հազարաւոր) մէկ միութիւն:

Չորրորդ կարգի տաս միութիւնից կազմում ենք հինգերորդ կարգի (տաս հազարաւոր) մէկ միութիւն:

Հինգերորդ կարգի տաս միութիւնից կազմում ենք վեցերորդ կարգի (հարիւր հազարաւոր) մէկ միութիւն:

Վեցերորդ կարգի տաս միութիւնից կազմում ենք եօթերորդ կարգի (միլիոնաւոր) մէկ միութիւն:

Այսպիսով իւրաքանչիւր կարգի միութիւնը տաս անգամ մեծ է իւր նախորդ կարգի միութիւնից և տաս անգամ փոքր է իւր յետնորդ կարգի միութիւնից: Կամ իւրաքանչիւր կարգի թիւը աջ կողմի թւից տասն անգամ մեծ է, իսկ ձախ կողմի թւից տաս անգամ փոքր:

Ուրեմն հաշուելով միաւորից դէպի ձախ թուակարգերը հետզհետէ միմեանցից տաս-տաս անգամ մեծանում են. կամ հակառակը — հաշուելով թւի մէջ եղած ամենամեծ թուակարգից ինչքան դէպի աջ իջնելու լինենք (դէպի միաւորը) թուակարգերը հետզհետէ տաս-տաս անգամ փոքրանում են:

ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱՆԵՐ. — Եթէ միութիւնը բաժանենք 10 հաւասար մասի, իւրաքանչիւր այդպիսի մասը կը կոչւի միութեան տասերորդ կամ տասնորդական մաս:

Եթէ միութիւնը բաժանենք 100 հաւասար մասի, իւրաքանչիւր այդպիսի մասը կը կոչւի միութեան հարիւրերորդ կամ հարիւրերորդական մաս:

Եթէ միութիւնը բաժանենք 1000 հաւասար մասի, իւրաքանչիւր այդպիսի մասը կը կոչւի հազարերորդ կամ հազարերորդական մաս:

Այն թիւը, որ պարունակում է միութեան մի կամ մի քանի տասնորդական, հարիւրերորդական, հազարերորդական մասեր, կոչւում է տասնորդական կոտորակ:

ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ՉԱՓԵՐ. — Մի որևէ իրի հրկարութիւնը չափելու համար մեզ մօտ գործ են ածում գէազր, բայց երբ չափելու տարածութիւնը մեծ է, — ինչպէս օրինակ՝ երկու գիւղերի կամ քաղաքների հեռաւորութիւնը, — գէազով չեն չափում, այլ աւելի մեծ չափով՝ Փարսաղով (աղաջ):

Մի որևէ իրի ծանրութիւնը մեզ մօտ կշռում են բաթմանով. բայց երբ իրի քանակութիւնը մեծ է, — ինչպէս օրինակ՝ փառելափայտ, ածուխ, ցորեն և այլն, — հաշւում են աւելի մեծ չափով՝ խալաբով:

Մեծ չափերը կազմած են միշտ նոյն տեսակի չափի միութիւններից. օրինակ՝ խալաբը կազմած է բաթմաններից, հարիւր բաթմանին ասում ենք խալաբ: 10 զոանին ասում ենք թուման, 24 ժամին ասում ենք օր:

Մեր երկրում գործ է ածուում նաև ուրիշ երկրների չափեր. ուստի չափերից՝ փութ, գրանդայ և ֆրանսիական չափեր՝ մետր, գրամ: Ֆրանսիական չափերին անւանում են նաև մետրական չափեր կամ սանտոգրական չափեր: Տասնորդական է կոչւում նրա համար, որովհետև մէկ չափ միւսից մեծ կամ փոքր է տաս անգամ, հարիւր անգամ, հազար անգամ և այլն:

Ֆրանսիական չափերի միութիւնը կոչւում է մետր (չամեմասել մետր սեղական երկարութեան չափի միութեան հետ):

Տաս մետրը կազմում է մի նոր չափ, որին ասում են դեկամետր (տասնամետր):

Տասը դեկամետրը (100 մետր) կազմում է մի նոր չափ, որին ասում են հեկտոմետր (հարիւրամետր):

Տասը հեկտոմետրը (1000 մետր) կազմում է մի նոր չափ, որին ասում են կիլոմետր (հազարամետր):

Ֆրանսիական ծանրութեան չափի միութիւնը կոչւում է գրամ (մօտաւորապէս $\frac{1}{4}$ մսխալ):

Տասը գրամը կազմում է մի նոր չափ, որին ասում են դեկագրամ (տասնագրամ):

Տասը դեկագրամը (100 գրամ) կազմում է մի նոր չափ, որին ասում են հեկտոգրամ (հարիւրագրամ):

Տասը հեկտոգրամը (1000 գրամ) կազմում է մի նոր չափ, որին ասում են կիլոգրամ (հազարագրամ)*):

Այսպիսով 14 մետրը կարող ենք կարգալ՝ 1 դեկամետր և 4 մետր: 125 գրամը կարող ենք կարգալ՝ 1 հեկտոգրամ, 2 դեկագրամ և 5 գրամ: 1246 մետրը կարող ենք կարգալ՝ 1 կիլոմետր, 2 հեկտոմետր, 4 դեկամետր և 6 մետր:

Հակառակը՝ 5 դեկագրամ և 2 գրամը կարող ենք

*) Մետր և գրամ բառերի առաջ դրած դեկա, հեկտո, կիլո բառերը յունարէն են և նշանակում է՝ տաս, հարիւր, հազար:

կարգալ՝ 52 գրամ: 6 հեկտոմետր, 8 դեկամետր և 3 մետրը կարող ենք կարգալ՝ 683 մետր: 3 կիլոգրամ, 7 հեկտոգրամ, 9 դեկագրամ և 7 գրամը՝ 3797 գրամ:

Կարգալ՝ ֆանի⁶ կիլոմետր, հեկտոմետր, դեկամետր և մետր է.

2445 մետր, 3015 մետր, 614 մետր, 503 մետր, 9006 մետր, 4307 մետր, 45 մետր, 192 մետր, 875 մետր:

Քանի⁶ կիլոգրամ, հեկտոգրամ, դեկագրամ և գրամ է.

36 գրամ, 185 գր., 297 գր., 1475 գր., 209 գրամ, 740 գր., 2005 գր., 3015 գր., 415 գր., 907 գր., 9100 գր.:

Կարգալ մետրով.

Կարգալ գրամով.

ա. 3 դեկամետր 5 մետր.

ա. 2 դեկագրամ, 9 գրամ.

բ. 9 հեկտո., 1 դեկմ., 1 մետր.

բ. 5 հեկագր., 3 դեկագր., 6 գր.

գ. 5 հեկտոմետր 2 մետր.

գ. 8 հեկտոգրամ, 5 գրամ.

դ. 1 հեկտոմետր 9 մետր.

դ. 7 կիլոգր., 8 հեկտոգր., 4 գրամ.

ե. 3 կիլմ., 5 հեկտմ., 2 դեկմ.,

ե. 6 կիլոգր., 9 դեկգր., 1 գր.

զ. 8 կիլոմետր, 2 դեկամետր.

զ. 1 կիլոգրամ, 9 գրամ.

է. 7 կիլոմետր, 1 մետր.

է. 12 հեկտոգրամ.

ՄԻՈՒԹԻԻՆԻՅ ՓՈԳՐ ՉԱՓԵՐ.— Փոքր քանակութիւններ չափելու համար գործ են ածում միութիւնից փոքր չափեր: Այսպէս օրինակ մեզ մօտ բաթմանից փոքր չափերն են՝ չարէկը, սիան, փոնգան. զուանից փոքր չափերը՝ արասին, շահին և այլն:

Ֆրանսիացիք երկարութեան միութիւնից փոքր չափերի համար գործ են ածում՝ դեսիմետր, սանսիմետր, միլիմետր, իսկ ծանրութեան միութիւնից փոքր չափերի համար՝ դեսիգրամ, սանսիգրամ, միլիգրամ:

Այս չափերը կազմում են այսպէս.

Մետրը բաժանում են տաս հաւասար կտորների կամ մասերի, իւրաքանչիւր մասը դառնում է մի նոր չափ, որին անւանում են դեսիմետր (տասերորդական մետր).

ուրեմն մի զեփմետրը 10 անգամ փոքր է մետրից։

Դեփմետրը տաս հաւասար մասերի բաժանելով ըստանում են մի նոր չափ, որին անւանում են սաւսիմետր (հարիւրերորդական մետր) ուրեմն մի սանտիմետրը 10 անգամ փոքր է զեփմետրից, 100 անգամ փոքր է մետրից։

Սանտիմետրը տաս հաւասար մասի բաժանելով ըստանում են մի նոր չափ, որոն անւանում են միլիմետր (հազարերորդական մետր)։ ուրեմն միլիմետրը 10 անգամ փոքր է սանտիմետրից, 100 անգամ փոքր է զեփմետրից, 1000 անգամ փոքր է մետրից։

Նոյնն է նաև ծանրութեան չափերի մէջ։

Դրամը ծանրութեամբ տաս հաւասար կտորներ անելով, իւրաքանչիւր կտորին ասում են՝ դեսիգրամ (տասերորդական գրամ)։ ուրեմն դեսիգրամը 10 անգամ թեթեւ է գրամից։

Դեսիգրամն էլ ծանրութեամբ տաս հաւասար կտորներ անելով, իւրաքանչիւր կտորին ասում են՝ սաւսիգրամ (հարիւրերորդական գրամ)։ ուրեմն սանտիգրամը թեթեւ է զդեսիգրամից 10 անգամ, գրամից՝ 100 անգամ։

Սանտիգրամն էլ ծանրութեամբ տաս հաւասար կտորներ անելով, իւրաքանչիւր կտորին անւանում են՝ միլիգրամ (հազարերորդական գրամ)։ ուրեմն միլիգրամը թեթեւ է սանտիգրամից 10 անգամ, զդեսիգրամից՝ 100 անգամ, գրամից՝ 1000 անգամ։

Ե Ր Կ ա Ր Ո Ւ Թ Ե ա Ն չ ա փ Է ր

Կիլոմետրը = 10 հեկտոմետրի = 1000 մետրի։

Հեկտոմետրը = 10 դեկամետրի = 100 մետրի։

Դեկամետրը = 10 մետրի։

Մետրը = 10 դեցիմետրի = 100 սանտիմետրի։

Դեցիմետրը = 10 սանտիմետրի։

Սանտիմետրը = 10 միլիմետրի։

Ծ ա Ն ր Ո Ւ Թ Ե ա Ն չ ա փ Է ր

Կիլոգրամը = 10 հեկտոգրամի = 1000 գրամի։

Հեկտոգրամը = 10 դեկագրամի = 100 գրամի։

Դեկագրամը = 10 գրամի։

Գրամը = 10 դեսիգրամի։

Դեսիգրամը = 10 սանտիգրամի։

Սանտիգրամը = 10 միլիգրամի։

Միութեան կտորներին անւանում են կոստրակ։

Մետրից և գրամից փոքր չափերը կոչւում են կոտորակ չափեր։

Երբ մէկ միաւորը բաժանում հինք տաս հաւասար մասերի, այդ մասերը կոչւում են տասնորդական և գրւում են միաւորի աջ կողմում։ Այդ դէպքում միաւորից յետոյ դրնում ենք ստորակէտ կամ միջակէտ, որպէսզի միաւորների կարգը չշփոթենք տասնորդական մասերի հետ։

Մէկ միաւոր և մէկ տասնորդականը գրւում ենք այսպէս։

1,1 և կարգում ենք մէկ ամբողջ մէկ տասնորդական։

Բառասուն վեց միաւորն ու մի տասնորդը գրւում ենք։

46,1

կարգում ենք՝ բառասունվեց ամբողջ մէկ տասնորդական։

Երբ տասնորդական կտորներից ունենք երկու հատ, անւանում ենք երկու տասնորդական։ Երկու դեփմետրը երկու տասնորդական մետր է։

Երբ տասնորդական կտորներից ունենք 3 հատ, անւանում ենք երեք տասնորդական։ Երեք դեփմետրը երեք տասնորդական մետր է։

Չորս հատ տասնորդական կտորին ասում ենք չորս տասնորդական։ Չորս դեփմետրը չորս տասնորդական մետր է և այլն։

Տասնորդական մասեր ցոյց տուող թիւը գրւում է միաւորի աջ կողմում՝ առաջին կարգում։

Կարդալ.— ա. 4,5 7,3 52,5 46,6 4,9 1,4
բ. 23,8 10,7 2,5 13,7 105,9 216,4 287,2:

Երբ թի մէջ միութիւններ չկան, այլ միայն միութիւնից փոքր թիւեր են, այսինքն կոտորակներ, միութեան փոխարէնը գրում ենք մի գերօ, ապա ստորակէտ և յետոյ տասնորդական մասեր ցոյց տուող թիւը: Օրինակ՝ **0,3**.
Կարգում ենք՝ գերօ ամբողջ երեք տասնորդական:

Կարդալ.— 0,8 0,7 0,2 0,1 0,5 0,6 0,4.
2,7 մետրը կարող ենք անւանել 2 մետր, 7 դեցիմետր.
4,2 գրամը կարող ենք անւանել 4 գրամ, 2 դեցիգրամ.

Վերածի՛ր իւրաքանչիւր կարգն իր համապատասխան չափերի հետեւեալ վարժութիւնների մէջ.

ա. 228 մետր. 219,4 մետր. 1815,6 մետր, 0,9 մետր.
բ. 5,4 գրամ, 115,1 գրամ. 0,6 գրամ, 1001,2 գրամ.
գ. 0,5 գրմ. 0,8 մետր. 339,4 գրմ. 681,2 մտր. 0,9 մտր.:

Դարձում մետր.

Դարձում գրամ.

ա. 5 հեկտոմետր, 4 դեկամետր.	ա. 1 գրամ, 2 դեցիգրամ.
բ. 2 մետր, 8 դեցիմետր.	բ. 8 դեցիգրամ.
գ. 9 կիլոմ., 6 դեկամ., 3 դեցիմ.	գ. 1 դեկագր., 6 գր., 3 դեցիգր.
դ. 1 կիլոմ., 8 հեկտոմ., 4 դեցիմ.	դ. 1 հեկտոգրամ, 3 դեցիգրամ.
ե. 1 հեկտոմ., 1 դեցիմ.	ե. 2 կիլոգր., 1 հեկտոգրամ:

Երբ տասնորդական մասը բաժանում ենք տաս հաւասար մասերի, դրանով միաւորը բաժանած ենք լինում հարիւր հաւասար մասերի. այդ պատճառով էլ այդ կտորները կոչւում են հարիւրերորդական մասեր.

Սանտիմետրը մետրի հարիւրերորդական մասն է. իսկ դեցիմետրից փոքր է տաս անգամ. այդ պատճառով էլ սանտիմետր ցոյց տուող թիւը գրում ենք դեցիմետրի աջ կողմում, միաւորից յետոյ երկրորդ կարգում.

Եթէ ունենք 5 միութիւն. 4 տասնորդական և 3 հարիւրերորդական, կը գրենք այսպէս՝

5,43

կը կարդանք՝ հինգ ամբողջ քառասուն երեք հարիւրերորդական.

Կարդալ.—

ա. 4,13 6,74 12,81 124,92 1604,04 2001,48.
բ. 95,67 218,72 300,54 62,41 8001,34.

Ինչպէս միութիւնների մէջ, այնպէս էլ տասնորդական մասերի մէջ պակտող կարգի փոխարէն դնում ենք գերօ:
Օրինակ՝ **0,05**

Կարգում ենք՝ գերօ ամբողջ հինգ հարիւրերորդական:

Կարդալ.—

ա. 0,04 1,09 101,06 30,82 0,05 0,04.
բ. 111,01 2040,09 200,05 249,02 64,07:

Գրել թւանշաններով.— Մէկ ամբողջ ութհարիւրերորդական, փեց ամբողջ տասնչորս հարիւրերորդական, ութ ամբողջ երեսուն եօթ հարիւրերորդական, գերօ ամբողջ մէկ հարիւրերորդական, չորս հարիւր յիսունմէկ ամբողջ հինգ հարիւրերորդական.

Վերածի՛ր իւրաքանչիւր կարգն իր համապատասխան չափերի հետեւեալ վարժութիւնների մէջ.

ա. 12,24 մետր, 112,64 մետր, 0,04 մետր, 1,11 մետր.
բ. 218,46 գրամ, 21,42 գրամ 0,08 գրամ, 0,89 գրամ.
գ. 0,75 մետր, 28,03 գրամ, 75,06 մետր, 0,47 գրամ:

Դարձում մետր.

Դարձում գրամ.

ա. 1 մետր, 4 դեցիմետ., 5 սնտոմետ.	ա. 1 կիլոգր., 3 գրմ., 9 սնտոգրմ.
բ. 3 հեկտոմ., 6 դեկմ., 4 մետր.	բ. 2 հեկտոգր., 1 դեկգր., 1 գր.
գ. 6 դեցիմետր, 8 սանտիմետր.	գ. 1 դեկգրմ., 2 գրմ., 1 դեցիգր.
դ. 1 կիլոմետ., 1 դեկմ., 6 դեցիմ.	դ. 4 կիլոգրամ, 1 սանտիգրամ
ե. 5 կիլոմետր, 1 սանտիմետր:	ե. 6 հեկտոգրամ, 2 գրամ:

Երբ հաբիրերորդական մասը բաժանում ենք տասը հաւասար մասերի, այդպիսով միաւորը բաժանած ենք լինում հազար հաւասար մասերի. այդ պատճառով էլ այդ մասերը կոչւում են հազարերորդական մասեր:

Միլիմետրը մետրի հազարերորդական մասն է և փոքր է սանտիմետրից տաս անգամ. այդ պատճառով էլ միլիմետր ցոյց տուող թիւը գրում ենք սանտիմետրի աջ կողմում—միաւորից յետոյ երբուրդ կարգում:

Եթէ ունենք 3 միլիմետր, 2 տասնորդական, 6 հարիւրերորդական և 4 հազարերորդական, գրում ենք այսպէս.

3,264

կարգում ենք երեք ամբողջ երկու հարիւր վաթսուն չորս հազարերորդական:

Ուրեմն տասնորդական կոտորակը կարգալու համար հարկաւոր է նախ կարգալ ամբողջը, ապա ստորակէտից յետոյ գրւած թիւը՝ տալով վերջին տասնորդական կարգի անունը:

Կ ա Ր Դ ա լ .—

ա. 0,126 1,214 45,025 164,206 4564,258
բ. 125,104 0,065 20,081 3,004 83,009
գ. 0,821 23,014 345,657 39,072 0,753 0,957
դ. 29,637 0,003 0,009 24,007 0,034 0,111
ե. 0,222 23,333 25,015 49,022 475 001 0,651

Գրել քաւանգանհետով.— Ութ ամբողջ վաթսուն եօթ հազարերորդական. եօթանասուն ամբողջ երեք հարիւր յիսուն երեք հազարերորդական, զերօ ամբողջ ութ հարիւր հինգ հազարերորդական, ինն ամբողջ երկու հազարերորդական. քսան ամբողջ տասնվեց հազարերորդական, քսան հինգ ամբողջ եօթ հարիւր երեք հազարերորդական, զերօ ամբողջ իննսուն երեք հազարերորդական, եօթանասուն ամբողջ մէկ հազարերորդական, երկու ամբողջ երկու հազարերորդական:

Կարգալ հետեւեալ աղիւսեակի մէջ գրւած քեր.

Միլիմետրներ			Տասնորդական մասեր			Գրում է
3	2	1	1	2	3	
Հարիւր	Տասնորդական	Միաւոր	Տասնորդական	Հարիւրերորդական	Հազարերորդական	
		0	1	—	—	0,1
	2	5	3	6	—	25,36
1	—	9	—	—	8	109,008
3	—	—	7	—	—	300,7
5	6	7	8	3	1	567,831

Կարգալ.— ա. 5,81 0,26 42,052 8,05 34,008
բ. 0,009 68,346 5,409 0,081 9,4

Տասնորդական կոտորակների մեծացնելն ու փոքրացնելը 10, 100, 1000 անգամ:

Եթէ տասնորդական կոտորակի ստորակէտը տանենք մի թւանշան դէպի աջ, թիւը կը մեծանայ 10 անգամ. եթէ տանենք երկու թւանշան դէպի աջ, կը մեծանայ 100 անգամ, երեք թւանշան դէպի աջ՝ 1000 անգամ:

Օրինակ՝ եթէ 1,11-ի ստորակէտը դէպի աջ մէկ թւանշան տեղափոխենք կունենանք 11,1. երեք թւակարգն էլ հաւասարապէս 10 անգամ մեծացան, որով ամբողջ թիւն էլ 10 անգամ մեծացաւ. 1,11-ի 1 ամբողջը դարձաւ 10 ամբողջ. 1 տասնորդականը դարձաւ 1 միաւոր, իսկ 1 հարիւրերորդականը դարձաւ 1 տասնորդական:

Եթէ ստորակէտը երկու թւանշան տանենք դէպի աջ, թիւը կը մեծանայ հաւիւր անգամ:

Օրինակ՝ **0,246**-ի ստորակէտն երկու թւանշան աջ տանելով, կունենանք **24,6**։

Եթէ ստորակէտը երեք թւանշան տանենք դէպի աջ, թիւը կը մեծանայ հազար անգամ։

Օրինակ՝ **1,142**-ի ստորակէտն երեք թւանշան աջ տանելով՝ կունենանք **1142** ամբողջ։

Ստորակէտը տեղափոխելիս թւակարգերը պակաս եղած դէպքում, դերօ կաւելացնենք պէտք եղած չափով։

Օրինակ՝ **12,3** տասնորդականը մեծացնելով **1000** անգամ, կստանանք **12300**։

Մ ե ծ ա ց ն ե լ . —

ա. $\backslash$ **0,8** **2,41** **0,05** **0,374**-ը **10** անգամ։

բ. $\backslash$ **23,3** **45,15** **0,72** **3,094**-ը **100** անգամ։

գ. $\backslash$ **84,5** **7,65** **0,09** **0,073** **53,64**-ը **1000** անգամ։

Տասնորդական կոտորակի ստորակէտը եթէ տանենք մի թւանշան դէպի ձախ, թիւը կը փոքրանայ **10** անգամ։ Եթէ տանենք երկու թւանշան դէպի ձախ, թիւը կը փոքրանայ **100** անգամ։

Օրինակ՝ **12,4**-ի ստորակէտը տանենք մէկ թւանշան դէպի ձախ, կստանանք **1,24**, որը **10** անգամ փոքր է տուած թիւից։

743,5-ի ստորակէտը տանենք երկու թւանշան դէպի ձախ, կստանանք **7,435**, որը **100** անգամ փոքր է տուած թիւից։

Եթէ ձախ կողմում թւակարգեր պակասում են, դերօ ենք աւելացնում։

Օրինակ՝ **0,5**-ը փոքրացնել **10** անգամ, կունենանք **0,05**։ **1,3**-ը փոքրացնել **100** անգամ, կունենանք **0,013**։

Փոքրացնել **10** անգամ։

ա. $\backslash$ **24,5** **63,8** **124,64** **5,87** **0,56** **0,7** **0,3**

բ. $\backslash$ **3,85** **9,744** **0,795** **0,72** **0,71** **0,926**

Փոքրացնել **100** անգամ։

ա. $\backslash$ **151,1** **76,3** **52,2** **66,5** **743,1** **0,2** **0,7**

բ. $\backslash$ **0,9** **0,5** **701,3** **604,2** **0,7** **999,9** **0,1**

— —

Տասնորդական թւերի վերջում աւելացրած զերօները չեն փոխում թւի մեծութիւնը։ Ունենք **1,50** մետր, մենք գիտենք, որ սա նշանակում է նաև **1** մետր **5** դեսիմետր, որ կարող ենք արտայայտել գրելով **1,5** մ. դուրս գցելով զերօն։

Ձեջիւր գերօները եւ կարդա՝

ա. **1,50** **2,400** **35,10** **0,500** **0,80** **1,050**

բ. **25,100** **10,10** **0,020** **140,600** **170,80**

Տասնորդական կոտորակների վերջում եղած զերօների ջնջումը կոչւում է կրճատում։

Երբ տասնորդական կոտորակի վերջում զերօներ ենք աւելացնում, նրա մեծութիւնը չի փոխւում։

Ունենք **3,8** գրամ, որի վերջում եթէ աւելացնենք մէկ կամ երկու զերօ, նրա քանակութիւնը չի փոխւի։ այդ դէպքում կունենանք **3,80** գրամ, կամ **3,800** գրամ։ Երեք դէպքում էլ թւերը ծանրութեան նոյն քանակութիւնն են ցոյց տալիս։

3,8 գրամ = **3,80** գր. = **3,800** գր. կամ

3 գրամ **8** դեկագր. = **3** գր. **80** սանտիգրամի =

3 գրամ **800** միլիգրամի։

Կարդալ հարիւրերորդական մասերով։

ա. **8,4** (**8,40**) **0,5** **124,4** **835,2** **64,1** **2,3** **345,9**

բ. **64,3** **746,1** **790,8** **0,6** **0,7** **29,3** **643,2** **25,7**

Կարդալ հազարերորդական մասերով։

ա. **1,2** (**1,200**) **1,45** **0,87** **3,7** **14,5** **167,9** **0,1**

բ. **41,72** **81,5** **0,2** **0,15** **0,04** **0,06** **72,07** **29,9**

Այն չափերն, որոնք միմեանցից 10, 100 կամ 1000 անգամ մեծ են, կարող ենք ստորակէտի տեղափոխումով վերածել կամ անդրադարձնել:

Վերածելիս պիտի ղեկավարենք տասնորդական կոտորակների մեծացնելու օրէնքով. այսպէս՝ 1,5 մետրը ղեսիմետր դարձնելու համար պէտք է մեծացնենք 10 անգամ, որի համար ստորակէտը կը շարժենք մէկ թւանշան դէպի աջ և կունենանք 15 ղեսիմետր: Նոյն 1,5 մետրը կարող ենք վերածել սանտիմետրի. որի համար պէտք է մեծացնենք 100 անգամ. ստորակէտը երկու թւանշան կը շարժենք դէպի աջ և կունենանք 150 սանտիմետր: Ստորակէտը երեք թւանշան դէպի աջ տեղափոխելով կը մեծանայ 1000 անգամ, կունենանք 1500 միլիմետր:

Վ եր ա ծ ե լ.—

- Չա. 3,75 գրամը վերածել ղեսիգրամի և տպա միլիգրամի:
 Գր. 12,46 մետրը — ղեսիմետրի — միլիմետրի:
 Կգ. 8,5 թուումանը — դռանի: 0,5 դռանը սանտիմի:
 Կդ. 1,65 դռանը — սանտիմի: 0,85 դռանը — սանտիմի:
 Խե. 6,8 խալարը — բաթմանի: 0,64 խալարը — բաթմանի:
 Դգ. 14,55 խալարը — բաթմանի: 38,6 խալ. — բաթմանի:
 Էէ. 1,125 բաթմ. — մսխալի(բաթմանը հաշուելով 1000 մսխ.):
 Էր. 0,625 բաթմանը — մսխալի: 1,3 բաթմանը — մսխալի:
 Թ. 3,54 բաթմանը — մսխալի: 0,8 բաթմանը — մսխալի:
 Ժ. 15,3 գրամը — սանտիգրամի: 2,1 գրամը — միլիգրամի:
 Ժա. 0,3 հեկտոգրամը — գրամի: 1,2 կիլոգրամը — ղեկազր.:
 Ժբ. 1,2 կիլոմետրը — միլիմետրի: 2,5 կիլոգրամը — գրամի:
 Ժգ. 0,6 կիլոմետրը — մետրի: 0,25 կիլոգրամը — գրամի:

Տասնորդական չափերն անդրադարձնելիս պէտք է ղեկավարենք տասնորդական կոտորակների փոքրացնելու օրէնքով՝ ստորակէտը տեղափոխելով դէպի ձախ:

3,7 ղեսիմետրը դարձնենք մետր: 10 ղեսիմետրը 1

մետր է. ուրեմն մեր ունեցած թիւը պէտք է փոքրացրենք 10 անգամ, ստորակէտը կը շարժենք դէպի ձախ մէկ թւանշան և կունենանք 0,37 մետր:

Նոյն 3,7 ղեսիմետրը կարող ենք դարձնել ղեկամետր, որի համար պէտք է փոքրացնենք 100 անգամ, ստորակէտը երկու թւանշան կը շարժենք դէպի ձախ և կունենանք 0,037 ղեկամետր:

Ա. ն դ ր ա դ ա ռ ձ ն ե լ

- | | |
|------------------------------|----------------------------|
| ա. 156,5 ղեսիգրամը — գրամի. | դ. 193 բաթմանը — խալարի. |
| 75,7 գրամը — ղեկազրամի. | 345 բաթմանը — խալարի. |
| 1264 գրամը — կիլոգրամի. | 9465 մսխալը — բաթմանի. |
| 27,2 միլիգրամը — ղեսիգրամի. | 353 մսխալը — բաթմանի. |
| բ. 16,4 մետրը — ղեկամետրի. | ե. 75 սանտիգրամը — գրամի: |
| 29,5 մետրը — հեկտոմետրի. | 89 հեկտոգրամը — կիլոգրամի. |
| 2139 մետրը — կիլոմետրի. | 64 սանտիմետրը — մետրի. |
| 67,8 միլիմետրը — սանտիմետրի. | 135 մետրը — հեկտոմետրի. |
| գ. 80 դռանը — թուումանի. | դգ. 466 դռանը — թուումանի. |
| 164 դռանը — թուումանի. | 35 սանտիմը — դռանի. |
| 175 սանտիմը — դռանի. | 25 բաթմանը — խալարի. |
| 285 սանտիմը — թուումանի. | 92 մսխալը — բաթմանի. |

ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

Տասնորդական կոտորակների գումարումը կատարում ենք ինչպէս ամբողջ թւերի գումարումը: Կոտորակները գրում ենք իրար տակ այնպէս, որ ամբողջ թւերը լինեն մէկը միւսի տակ, ստորակէտներն էլ ուղղահայեաց գծի վրայ և իրար տակ: Տասնորդական մասերը տասնորդական մասերի տակ, հարիւրերորդականը՝ հարիւրերորդականի տակ և այլն: Սրանց տակը գիծ ենք քաշում և կողքին դնում գումարման նշանը:

Օրինակ՝ 145,8+0,706+97,68+2,96:

Դրում ենք այսպէս.

ա.	245,8	կամ թէ՛	բ.	245,800
	0,706			0,706
+	97,68		+	97,680
	2,06			2,060
	<u>346,246</u>			<u>346,246</u>

Եթէ տասնորդական կոտորակների հետ զործողութիւններ կատարելուց յետոյ ստացւեն զերօներով վերջացող տասնորդական թւեր, հարկաւոր է տասնորդական թւերի վերջին զերօնները ջնջել՝ կրճատել:

Օրինակ՝

ա.	7,274	բ.	3,348
+	28,626	+	25,152
	<u>35,9(00)</u>		<u>28,5(00)</u>

Կարգւ. 30 ամբողջ 9 տասնորդական. 28 ամբողջ 5 տասնորդակ.:

Վնութիւն հետեւեալ վարժութիւններ.

1.	7,4	0,5	2,52	3,28	0,81
	+ 0,2	+ 3,6	+ 1,4	+ 0,05	+ 5
	<u>4,1</u>	<u>8,9</u>	<u>0,26</u>	<u>4,83</u>	<u>7,09</u>
2.	3,416	0,51	721,05	65,05	6,009
	+ 1,5	+ 1,34	+ 0,436	+ 1,8	+ 21,3
	<u>4,005</u>	<u>143</u>	<u>3,5</u>	<u>0,008</u>	<u>7,04</u>

Դասաւորել իրար տակ եւ վնութիւն հետեւեալ վարժութիւններ

3.	5,4+0,3+5,2	5,1+2,6+4	6,8+12,4+5,02
	0,8+5,3+6,4	3,7+0,9+1,4	21,6+0,9+25
	4,12+2,21+3,04	0,29+1,7+42	7,04+25,1+0,8
	7,02+0,5+6,48	0,46+5,4+3,42	5,46+2,16+138

4.	0,72+1,001+8,4+21	7,25+80+0,06+0,01
	2,15+0,4+2,256+3,41	2,215+1,64+0,303+5,14
	41,3+0,19+0,8+5,48	0,003+0,1+0,05+15
	0,04+0,9+1,25+156	621,2+24,05+1,259+8

Դուրս բեր հետեւեալ սիւնեակներում եղած անւանական թւերի գումարը.

5.	Ղ.ումն	սնս.	6.	Ղ.ումն	սնս.	7.	Ղ.ումն	սնս.
	19	65		26	55		—	95
	23	70		88	00		370	30
	55	05		47	05		523	05
	37	50		220	65		2	65
	—	95		43	00		29	00
	125	10		75	20		130	40
Գումար՝			Գումար՝			Գումար՝		

8.	Ղ.ումն	սնս.	9.	Ղ.ումն	սնս.	10.	Ղ.ումն	սնս.
	25	00		395	05		412	00
	143	65		164	25		79	05
	8	05		74	00		1	85
	474	20		—	90		145	00
	6	00		183	35		—	75
	75	25		579	20		274	65
Գումար՝			Գումար՝			Գումար՝		

11. Խանութպանն առաջին անգամ գնեց 275,65 դր. ռանի շաքար, իսկ երկրորդ անգամ՝ 549,85 դրանի. Ո՞րքան վճարեց նա շաքարին:

12. Առետրականը մէկին վաճառեց 2,758 կիլօգր. կակաօ, միւսին՝ 7,8 կիլօգր. աւելի: Ո՞րքան կակաօ վաճառեց առետրականը:

13. Փայտավաճառը առաջին անգամ վաճառեց 12 թումանի փայտ, երկրորդ անգամ՝ 145,75 դրանի, երրորդ

անգամ՝ 89,95 ղռանի երկրորդ անգամից աւելի. Քանի ղռանի փայտ վաճառեց:

+14. Մի խումբ բանւորներ առաջին օրը փորեցին 4 կիլօմետր երկարութեամբ մի առու. երկրորդ օրը՝ ղռանից 68 մետր աւելի. երրորդ օրը՝ 5,02 կիլօմ. Ի՞նչ երկարութեամբ առու փորեցին 3 օրում:

+15. Գործակատարն առաջին ամսում խնայեց 5 թուման, երկրորդ ամսում՝ նրանից 28,75 ղռան աւելի, իսկ երրորդ ամսում՝ 89,25 ղռան. Ո՞րքան խնայեց նա 3 ամսում:

16. Բանւորը 4 օրում մի հոր փորեց. առաջին օրը նա փորեց 6,2 մետր, երկրորդ օրը՝ 2,1 մետր աւելի, երրորդ օրը՝ 7,26 մետր, իսկ չորրորդ օրը՝ 0,5 մետր աւելի երրորդ օրւայ փորածից. Ի՞նչ խորութեամբ հոր փորեց բանւորը:

+17. Խանութպանը գնեց 3 կողով խաղող. առաջին կողովն առանց խաղողի կշռում էր 0,7 բաթման, երկրորդը՝ 0,9 բաթման, երրորդը՝ 0,5 բաթման. Ո՞րքան ծանրութիւն ունէին խաղողով լի երեք կողովները. եթէ առաջին կողովում կար 12,5 բաթմ. խաղող, երկրորդում՝ 13,1 բաթման, իսկ երրորդում՝ 10,9 բաթման:

18. Գնեցին երեք կապոց երկաթալար. առաջին կապոցը 125,5 մետր երկարութիւն ունէր, երկրորդը՝ 8,62 մետր աւելի էր, իսկ երրորդի երկարութիւնը հաւասար էր առաջին և երկրորդ կապոցներում եղած լարերի երկարութեանը. Քանի մետր երկաթալար կար երեք կապոցում:

+19. Ապրանքատար գնացրի վագոնը բարձեցին 875,6 կիլօգրամ շարար. 92,67 հեկտօգրամ սուրճ, 105,08 կիլօգրամ թէյ և 759,42 դեկագրամ բրինձ. Քանի կիլօգրամ ապրանք բարձեցին:

ՏԱՄՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ՀԱՆՈՒՄԸ:

Տասնորդական կոտորակների հանումը կատարում ենք ամբողջ թւերի հանման եղանակով. այսինքն համապատասխան կարգերը գրում ենք միմեանց տակ, ստորակէտներն էլ իրար տակ և հանում ենք միմեանցից. Գործողութեան ընթացքում մնացորդի ամբողջը կոտորակից բաժանում ենք ստորակէտով:

Օրինակ՝

$$\text{ա. } 54,38 - 28,24 = 26,14 \quad \text{բ. } 2,65 - 1,86 = 0,79$$

$$\begin{array}{r} 54,38 \\ - 28,24 \\ \hline 26,14 \end{array}$$

$$\begin{array}{r} 2,65 \\ - 1,86 \\ \hline 0,79 \end{array}$$

Եթէ նւագելու ստորակէտից յետոյ եկող թւանշաններն աւելի քիչ են հանելու համապատասխան թւանշաններից, այդ դէպքում պակաս թւանշանների տեղ կարելի է գրել զերօններ:

$$\text{Օրինակ՝ } 35,6 - 18,927 = 16,673$$

$$\begin{array}{r} \text{ա. } 35,6 \quad \text{կամ թէ՛} \quad \text{բ. } 35,600 \\ - 18,927 \quad \quad \quad - 18,927 \\ \hline 16,673 \quad \quad \quad 16,673 \end{array}$$

Եթէ նւագելին միայն ամբողջ թիւ է, իսկ հանելին ունի նաև տասնորդական, հարիւրերորդական և այլ մասեր, այդ դէպքում պէտք է ամբողջից մէկ միութիւն վերցնել և դարձնել տասնորդական մասեր, տասնորդականներից մէկը՝ հարիւրերորդական մասեր և այլն, այնպէս ինչպէս ամբողջ թւերի հանման ժամանակ. Օրինակ՝

$$\begin{array}{r} \text{ա. } 9 - 6,4 = 2,6 \quad \text{բ. } 3 - 1,27 = 1,73 \\ \begin{array}{r} 9 \\ - 6,4 \\ \hline 2,6 \end{array} \quad \begin{array}{r} 9,0 \\ - 6,4 \\ \hline 2,6 \end{array} \quad \begin{array}{r} 3 \\ - 1,27 \\ \hline 1,73 \end{array} \quad \begin{array}{r} 3,00 \\ - 1,27 \\ \hline 1,73 \end{array} \end{array}$$

Ամբողջ թվերի գումարի և տարբերությունների բոլոր յատկությունները մնում են նույնը նաև տասնորդական կոտորակների մէջ:

20. Գումարը հաւասար է 42,7-ի, գումարելիներէց մէկն է 12,05. Գտնել միւս գումարելին:

21. Երկու թվերի տարբերութիւնն է 5,35. Հանելին 3,46 է. Գտնել նւագելին:

22. Նւագելին հաւասար է 8,72-ի. տարբերութիւնն է 3,4: Գտնել հանելին:

23. Տարբերութիւնը 45,7 է. Ո՞րքան կը լինի, եթէ նւագելին մեծացնենք 4,55-ով:

24. Ո՞րքան կը դառնայ 64,8 տարբերութիւնը, եթէ հանելին փոքրացնենք 24,09-ով:

Կատարել հանման հետեւեալ վարժութիւնները

25.	5.8 — 0,6	28,2 — 19,1	72,9 — 25,7	93,25 — 62.12	87,38 — 69,14
26.	7,12 — 2,25	69,42 — 5,75	8,79 — 0,84	42,23 — 6,38	27,34 — 0,49
27.	4,6 — 0,78	45,3 — 0,875	77,4 — 9,29	29,2 — 14,624	41,3 — 0,69
28.	8 — 3,4	15 — 6,12	25 — 0,723	274 — 6,29	72 — 0,295

Դասաւորել իրար տակ եւ վնդել հանման հետեւեալ վարժութիւնները.

29.	3,5—1,4 23,4—9,8 24,49—6.1 7,89—3,04	5,42—2,18 0,27—0,13 7,25—0,39 4,28—2,75	80,3—7,85 7,85—0,94 38,3—4,8 13,4—0,28	43—0,27 58—23,02 44—7,94 25—1,38
-----	---	--	---	---

30.	6,25—4,49 72,07—0,48 45—34,1 95,6—7,49	18,3—0,95 25,4—3,67 45,25—0,375 72,6—33,46	4—2.712 9—1.815 25—1,42 93—41,3	470—25,3 27,3—14,45 39,5—4,74 67,05—4,95
-----	---	---	--	---

31.	17—9,38 39—0,345 385—6,14 293—13,8	28—9,603 9—3,035 35—0,36 235—29,01	0.725—0,5 0,9—0,298 825,03—1,9 25,3—2.004	79,1—2,135 0,8—0,365 12,9—10,25 100,1—28,75.
-----	---	---	--	---

32.	725,6—1,05—4,25—95,17 446,3—29,08—3,19—4,05 613—7,8—0,42—7,42—0,19 45,25—7,05—15,07—0,715	234—0,72—33,4—71,09 29,8—7,05—2,4—13,05 210,4—29,7—1,5—0,45 45,5—0,29—3,45—3,85
-----	--	--

Հ ա ն ե լ.

33. ա. 5,8 ղուանից — 4,75 ղուան.
բ. 65,25 ղուանից — 25,3 ղուան.
գ. 254,05 ղուանից — 145,95 ղուան.
դ. 785 ղուանից — 343,85 ղուան.
ե. 2 թումանից — 7,35 ղուան.
զ. 8 թուման 3 ղուանից — 74,5 ղուան.
է. 6 թուման 4 ղուանից — 0,75 ղուան.
ը. 85 թումանից — 2,5 ղուան.

34. ա. 48,5 մետրից — 35,28 մետր. 20
բ. 38 մետրից — 21,025 մետր. 2,3
գ. 7 մետրից — 9,5 դեցիմետր.
դ. 6 մետրից — 7,7 դեցիմետր.
ե. 95 կիլոգրամից — 28,9 կիլոգրամ.
զ. 9 կիլոգրամից — 12,8 գրամ.
է. 2,65 կիլոգրամից — 1,38 կիլոգրամ.
ը. 0,5 կիլոգրամից — 244 գրամ.

× 35. Գիւղացիին գնեց մի ձի ու մի կով և երկուսի համար վճարեց 578,85 ղոան. Գանին արժէր կովը, եթէ ձին գնահատել էին 389 ղոան:

× 36. Դերձակը գնեց 215,6 մետր մահուղ, որից մի ամսւայ ընթացքում գործածեց 185,85 մետր. Գանին մետր մահուղ մնաց դերձակի մօտ:

× 37. Մի արկղում կար 84,7 կիլոգրամ շաքար. 79,85 կիլոգր. վաճառեցին. Ո՞րքան շաքար մնաց արկղում:

× 38. Հայրը 55,8 տարեկան է, որդին նրանից 26,9 տարով փոքր է: Գանին տարեկան է որդին:

× 39. Վաճառականն ունէր 875,72 կիլոգրմ. շաքար. առաջին անգամ վաճառեց 251,9 կիլոգրմ., երկրորդ անգամ՝ 383,05 կգրմ.: Ո՞րքան շաքար մնաց նրա մօտ:

× 40. Ճանապարհորդն ունէր 59 թուման. 325,75 ղոան նա վճարեց ինքնաշարժի, 85,65 ղոան՝ ուտելիքի: Ո՞րքան փող մնաց նրա մօտ:

× 41. Առևտրականը երեք անգամ ապրանք վաճառեց: Առաջին անգամ վաճառեց 217,6 կիլոգրմ., երկրորդ անգամը՝ 72,84 կիլոգրմ. աւելի, իսկ երրորդ անգամը՝ 329,98 կիլոգրմ. առաջին երկու անգամւայ վաճառածից պակաս: Ո՞րքան ապրանք վաճառեց:

× 42. Մարգագետնում աշխատում էին երեք խումբ հրնձուրի. առաջին խումբը հնձեց 384,2 խուրձ խոտ, երկրորդը՝ 149,9 խուրձ պակաս առաջինից. իսկ երրորդ խումբը՝ 89,27 խուրձ երկրորդից պակաս: Քանի խուրձ խոտ հնձեցին երեք խումբը միասին:

× 43. Խանութում երեք թոփ մահուղ կար. առաջին թոփը 46,72 գէազ էր, երկրորդը՝ 12,8 գէազ աւելի էր առաջինից, իսկ երրորդը՝ 9,48 գէազ պակաս էր երկրորդից. Քանի գէազ էր երեք թոփը միասին:

× 44. Մի բարեգործ Աղքատախնամ Ընկերութեանը նւիրեց 575,6 թուման, իսկ Կուլտուրական Միութեանը՝ 275,7 թուման պակաս: Ընդամենը զորքան փող նւիրեց:

45. Կարածատէրը ծախեց երեք ձի 928,75 ղոանով, առաջին ձին գնահատեց 337,70 ղոան, երկրորդը՝ 56,8 ղո. առաջինից պակաս: Ո՞րքան գնահատեց երրորդ ձին:

× 46. $75,147 + 6,25 - 34,943$ $63,08 - 47,75 + 35,3$
 $65,79 + 0,035 - 23,08$ $78,05 - 35,4 + 3,12$

× 47. $27,425 + 98,6 - (233 - 149,723) + 69,4 =$
 $0,75 + 138,79 - (7,89 - 0,735) - 0,715 =$

× 48. $97 - 3,845 + (79,005 + 25,8) + 14,05$
 $(0,6 + 53,85) - (87,9 - 82,027) + 0,99 =$

× 49. $(835 - 20,93) - (79,83 + 147,5) - 89,02 =$
 $895,97 - (28,35 + 298,05 - 145,009) =$

Հետեւեալ մուսի եւ ելի հաշիւների մէջ գտնել տարբերութիւնն եւ գրել ու կշիռ (բալանս) կազմել.

50.

Մ Ո Ւ Տ Ք		Ե Լ Ք	
Ղաւն	սն.	Ղաւն	սն.
247	80	14	65
98	25	132	50
500	10	426	00
286	05	203	55
4	90	11	70
175	15	Կշիռ	

51.

Մ Ո Ւ Տ Ք		Ե Լ Ք	
Ղաւն	սն.	Ղաւն	սն.
629	40	416	15
173	30	205	35
204	75	18	75
86	00	100	00
500	05	293	50
972	85	Կշիռ	

ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄԸ

Տասնորդական կոտորակների բազմապատկման ժամանակ պատահում է երեք դիպած.

ա. Տասնորդական կոտորակը բազմապատկել ամբողջով:

բ. Ամբողջ թիւը բազմապատկել տասնորդական կոտորակով:

գ. Տասնորդական կոտորակը բազմապատկել տասնորդական կոտորակով.

ա. Տասնորդական կոտորակը բազմապատկել ամբողջի վրայ.

Տասնորդական կոտորակը ամբողջի վրայ բազմապատկելու համար, պէտք է զուրս ձգել ստորակէտը և տւած թւերի հետ կատարել բազմապատկման գործողութիւնն այնպէս, ինչպէս ամբողջ թւերի հետ. և ապա ստացած արտադրեալից բաժանել ստորակէտով այնքան աջակողմեան թւանշաններ, որքան աջակողմեան թւանշան ունի բազմապատկելին: Օրինակ՝

$$\text{ա. } 5,2 \times 4 = 20,8$$

$$\begin{array}{r} 5,2 \\ \times 4 \\ \hline 20,8 \end{array}$$

$$\text{բ. } 2,34 \times 3 = 7,02$$

$$\begin{array}{r} 2,34 \\ \times 3 \\ \hline 7,02 \end{array}$$

Վնուել հետեւեալ վարժութիւնները (տասնորդական կոտորակը բազմապատկել ամբողջով).

52.	$\begin{array}{r} 8,2 \\ 4 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 3,3 \\ 5 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 0,6 \\ 9 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 0,7 \\ 6 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 3,5 \\ 5 \\ \hline \end{array}$
	$\begin{array}{r} 7,3 \\ 8 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 0,3 \\ 25 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 4,9 \\ 8 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 2,2 \\ 3 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 6,5 \\ 4 \\ \hline \end{array}$
	$\begin{array}{r} 0,3 \\ 24 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 3,2 \\ 9 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 12,4 \\ 6 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 19,5 \\ 9 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 22,3 \\ 7 \\ \hline \end{array}$

53.	$1,25 \times 4$	$2,38 \times 12$	$1,25 \times 34$	$0,391 \times 4$
	$3,35 \times 6$	$0,55 \times 16$	$2,37 \times 25$	$0,142 \times 8$
	$15,25 \times 2$	$0,07 \times 22$	$6,07 \times 9$	$1,361 \times 7$
	$17,13 \times 7$	$0,09 \times 19$	$8,49 \times 11$	$5,004 \times 6$

բ. Ամբողջ թիւը բազմապատկել տասնորդական կոտորակով.

Ամբողջ թիւը տասնորդական կոտորակով բազմապատկելիս, գործողութիւնը կատարում ենք այնպէս, ինչպէս տասնորդական կոտորակը ամբողջով բազմապատկելիս: Օրինակ՝

$$\text{ա. } 14 \times 0,6 = 8,4$$

$$\begin{array}{r} 14 \\ \times 0,6 \\ \hline 8,4 \end{array}$$

$$\text{բ. } 5 \times 0,25 = 1,25$$

$$\begin{array}{r} 5 \\ \times 0,25 \\ \hline 25 \\ + 10 \\ \hline 1,25 \end{array}$$

Վնուել հետեւեալ վարժութիւնները (ամբողջ թիւը բազմապատկել տասնորդական կոտորակով).

54.	$\begin{array}{r} 7 \\ 0,5 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 4 \\ 1,3 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 8 \\ 2,9 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 6 \\ 0,8 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 25 \\ 0,3 \\ \hline \end{array}$
	$\begin{array}{r} 18 \\ 4,8 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 12 \\ 1,4 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 21 \\ 0,7 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 16 \\ 0,3 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 32 \\ 1,1 \\ \hline \end{array}$
	$\begin{array}{r} 29 \\ 0,5 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 42 \\ 0,2 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 24 \\ 0,4 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 65 \\ 1,3 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 79 \\ 0,9 \\ \hline \end{array}$

55.	$7 \times 2,25$	$12 \times 0,11$	$2 \times 0,27$	$4 \times 0,3$
	$2 \cdot 1,13$	$9 \times 1,22$	$9 \times 0,25$	$46 \times 1,4$
	$7 \cdot 0,24$	$6 \times 2,35$	$8 \times 1,13$	$2 \times 0,38$
	$9 \cdot 1,15$	$12 \times 0,38$	$6 \times 2,18$	$5 \times 1,63$

գ. Տասնորդական կոտորակը բազմապատկել
տասնորդական կոտորակով.

Տասնորդական կոտորակը տասնորդական կոտորակով
բազմապատկելիս, պէտք է ստորակէտները ղուրս ձգել և
բազմապատկման գործողութիւնը կատարել այնպէս, ինչ-
պէս ամբողջ թւերը բազմապատկելիս. ստացած արտադր-
եալից պէտք է ստորակէտով բաժանել այնքան աջակողմ-
եան թւանշաններ, որքան աջակողմեան թւանշաններ ու-
նեն բազմապատկելին և բազմապատկիչը. Օրինակ՝

ա. $1,4 \times 2,3 = 3,22$

բ. $2,76 \times 1,4 = 3,864$

$$\begin{array}{r} 1,4 \\ \times 2,3 \\ \hline 42 \\ 28 \\ \hline 3,22 \end{array}$$

$$\begin{array}{r} 2,76 \\ \times 1,4 \\ \hline 1104 \\ 276 \\ \hline 3,864 \end{array}$$

Եթէ արտադրեալի թւանշաններն աւելի պակաս լի-
նեն, քան այդ հարկաւոր է ստորակէտից յետոյ, այդ դէպ-
քում պակաս մնացած թւանշանների տեղ՝ ձախ կողմից
պէտք է գերօններ աւելացնել: Օրինակ՝

ա. $0,3 \times 0,5 = 0,15$

բ. $0,04 \times 0,7 = 0,028$

$$\begin{array}{r} 0,3 \\ \times 0,5 \\ \hline 0,15 \end{array}$$

$$\begin{array}{r} 0,04 \\ \times 0,7 \\ \hline 0,028 \end{array}$$

Վնուել հետեւեալ վարժութիւնները (տասնորդական
կոտորակը բազմապատկել տասնորդական կոտորակով).

56.	$\begin{array}{r} 2,4 \\ \times 1,5 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 0,3 \\ \times 8,2 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 6,1 \\ \times 3,4 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 5,3 \\ \times 7,1 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 32,1 \\ \times 5,2 \\ \hline \end{array}$
	$\begin{array}{r} 3,9 \\ \times 0,3 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 2,6 \\ \times 0,7 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 0,3 \\ \times 7,2 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 0,37 \\ \times 4,1 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 2,7 \\ \times 5,2 \\ \hline \end{array}$
	$\begin{array}{r} 0,9 \\ \times 1,5 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 0,2 \\ \times 0,3 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 0,5 \\ \times 0,7 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 0,9 \\ \times 0,3 \\ \hline \end{array}$	$\begin{array}{r} 0,02 \\ \times 0,8 \\ \hline \end{array}$

57.	$22,1 \times 0,4$	$3,8 \times 4,5$	$12,1 \times 0,3$	$25,3 \times 0,72$
	$53,2 \times 0,3$	$0,72 \times 0,1$	$14,2 \times 1,9$	$69,1 \times 0,02$
	$63,3 \times 1,5$	$0,65 \times 1,4$	$29,3 \times 0,8$	$27,2 \times 0,1$
	$13,9 \times 4,1$	$1,5 \times 0,22$	$42,4 \times 1,1$	$2,18 \times 0,3$

58. $(0,7 \times 2,05) + (7,02 \times 0,9)$ $(5,4 \times 0,87) + (3,08 \times 25,7)$
 $(4,052 \times 8) - (0,8 \times 2,83)$ $(72,2 \times 0,8) + (6,07 \times 0,8)$

59. $(76,08 \times 4) - (4,08 \times 3,6)$ $(37 \times 0,5) + (37,6 - 23,8)$
 $(62 \times 0,7) + (0,7 + 2,2)$ $(0,25 + 37) \times (39,3 - 26,23)$

60. Մէկ բեռ ցորենը կշռում է 25,8 բալթման: Ո՞ր-
քան կը կշռի նոյն ծանրութիւնով 7 բեռ ցորենը:

61. Որդին 14,5 տարեկան է. հայրը մեծ է նրանից
3,6 անգամ: Քանի տարեկան է հայրը:

62. Մահուղի գէազն արժէ 3,5 թուման: Ո՞րքան կար-
ժենայ 8,5 գէազը:

63. 84,62 մետր պարանը 3 կտոր արին. առաջին
կտորի երկարութիւնը 18,7 մետր էր. երկրորդ կտորը
2,03 անգամ առաջինից երկար էր: Ո՞րքան էր երրորդ կը-
տորի երկարութիւնը:

64. Հրացանի գնդակը մի վայրկեանում անցնում է
430,5 մետր: Ո՞րքան տարածութիւն կանցնի 2,3 վայր-
կեանում:

65. Քաղցրաւէնիք վաճառողը գնեց 324 տուփ շա-
քարեղէն, տուփը 5,65 դրանով: Ո՞րքան շահեց նա բոլոր-
ւից, եթէ ինքը իւրաքանչիւր տուփը վաճառեց 6,8 դր.

66. Աշակերտը գնեց 8 տետրակ, հատը 0,4 դրանով,
16 գրչաձայր, հատը՝ 0,05 դրանով, 7 մատիտ, հատը՝
0,15 դրանով: Ո՞րքան վճարեց նա բոլորին:

67. Խոհաբարը գնեց մէկ բալթման միս, փոնդան 0,4
դրանով: Ո՞րքան պիտի յետ ստանայ նա մսավաճառից,

եթէ տւել էր մէկ թումանանոց թղթադրամ:

68. Բանւորը ստանում է օրեկան 4,6 դռան. նրա ամսական ծախսն է 104,7 դռան: Ո՞րքան է խնայում նա մի ամսում, եթէ գործում է 26 աշխատանքի օր:

69. Գործակատարն ամսական ստանում է 38,5 թուման. Ո՞րքան կը խնայի նա մի տարում, եթէ ամսական ուտելիքի համար ծախսում է 14,5 թուման, այլ և այլ պէտքերի համար՝ 12,8 թուման:

Նախապէս վերածել պարզ անւանական թւերի եւ ապա բազմապատկել:

70. ա. 14 մետր, 6 սանտիմետր, 4 միլիմետրը բազմապատկել 7 անգամ:

բ. 8 կիլօգրամ, 15 գրամ, 7 սանտիգրամը բազմապատկել 9 անգամ:

71. ա. 5 թուման, 8 դռան, 75 սանտիմը բազմապատկել 5 անգամ:

բ. 7 թուման, 15 սանտիմը բազմապատկել 12 անգամ:

72. ա. 5 խալւար, 28 բաթմանը բազմապատկել 13 անգամ:

բ. 60 խալւար, 1 բաթմանը բազմապատկել 9 անգամ:

ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Տասնորդական կոտորակների բաժանման ժամանակ պատահում է երեք դիպւած:

ա. Տասնորդական կոտորակը բաժանել ամբողջ թի վրայ:

բ. Ամբողջ թիւը բաժանել տասնորդական կոտորակի վրայ:

գ. Տասնորդական կոտորակը բաժանել տասնորդական կոտորակի վրայ:

ա. Տասնորդական կոտորակը ամբողջի վրայ բաժանելու համար, հարկաւոր է բաժանել նախ տասնորդական կոտորակի ամբողջը, ապա տասնորդական, հարիւրերորդական և այլ մասերը:

Եթէ ամբողջների, տասնորդականների, հարիւրերորդականների և այլ մասերի թիւը բաժանաւորից պակաս է, պէտք է քանորդի համապատասխան տեղում զերօ գրել:

Օրինակ՝

$$\begin{array}{r} 47,32 \div 4 = 11,83 \\ \begin{array}{r} 47,32 \\ - 4 \\ \hline 7 \\ - 4 \\ \hline 33 \\ - 32 \\ \hline 12 \\ - 12 \\ \hline 0 \end{array} \end{array}$$

$$\begin{array}{r} 0,4 \div 5 = 0,08 \\ \begin{array}{r} 0,4 \\ 40 \\ - 40 \\ \hline 0 \end{array} \end{array}$$

$$\begin{array}{r} 0,05 \div 25 = 0,002 \\ \begin{array}{r} 0,05 \\ 50 \\ - 50 \\ \hline 0 \end{array} \end{array}$$

բ. օրինակի մէջ 4 տասնորդականը չբաժանւելով 5-ի վրայ, դարձնում ենք հարիւրերորդական՝ աւելացնելով մի զերօ. իսկ եթէ մնացորդ մնայ կամ դարձնալ չբաժանւի (ինչպէս գ. օրինակում), այդ դէպքում դարձնում ենք հազարերորդական՝ աւելացնելով մի զերօ:

Վնոել հետեւեալ վարժութիւնները (տասնորդական կոտորակը բաժանել ամբողջի վրայ):

73.	$2,4 \div 2$	$0,02 \div 4$	$0,5 \div 6$	$7,2 \div 9$
	$4,32 \div 3$	$2,5 \div 5$	$0,021 \div 3$	$0,81 \div 6$
	$1,24 \div 4$	$2,16 \div 9$	$5,75 \div 5$	$0,36 \div 6$
	$0,8 \div 5$	$6,32 \div 8$	$0,06 \div 5$	$21,1 \div 4$

74.	$6.93 \div 3$	$0.34 \div 4$	$0.4 \div 5$	$68.24 \div 32$
	$0.2 \div 4$	$0.08 \div 32$	$0.06 \div 25$	$0.561 \div 34$
	$4.44 \div 12$	$0.9 \div 30$	$0.035 \div 20$	$2.79 \div 3$
	$2.136 \div 6$	$1.652 \div 7$	$2.133 \div 9$	$29.5 \div 5$

բ. Ամբողջ թիւը տասնորդական կոտորակի վրայ բաժանելու համար, պէտք է ամբողջի վերջում աւելացնել այնքան զերօ, որքան թւանշան ունի բաժանարարը ստորակէտից յետոյ, ապա դէն ձգել բաժանարարի ստորակէտը և բաժանել այնպէս, ինչպէս բաժանում ենք ամբողջ թւերը՝ Օրինակ՝

ա. $4 \div 0,5 = 8$

$$\begin{array}{r|l} 40 & 0,5 \\ -40 & 8 \\ \hline & \end{array}$$

բ. $48 \div 0,02 = 2400$

$$\begin{array}{r|l} 4800 & 0,2 \\ -4 & 2400 \\ \hline 8 & \\ 8 & \\ \hline 0 & \end{array}$$

Վնուել հետեւեալ վարժութիւնները (ամբողջ թիւը բաժանել տասնորդական կոտորակի վրայ)։

75.	$4 \div 0.2$	$75 \div 0.5$	$3 \div 0.15$	$18 \div 0.009$
	$96 \div 1.6$	$56 \div 0.08$	$8 \div 0.2$	$16 \div 0.08$
	$36 \div 0.12$	$261 \div 0.9$	$9 \div 0.032$	$4 \div 0.125$
	$8 \div 0.4$	$243 \div 0.03$	$9 \div 0.24$	$15 \div 0.5$

76.	$4 \div 0.125$	$10 \div 0.02$	$64 \div 0.08$	$132 \div 0.4$
	$81 \div 0.09$	$1 \div 0.016$	$72 \div 0.09$	$171 \div 0.9$
	$72 \div 0.03$	$8 \div 0.04$	$90 \div 1.5$	$234 \div 0.03$
	$49 \div 0.07$	$5 \div 0.002$	$45 \div 0.05$	$180 \div 0.6$

գ. Տասնորդական կոտորակը տասնորդական կոտորակի վրայ բաժանելու համար, պէտք է բաժանելիի և բաժանարարի աջակողմեան (տասնորդական մասերը) հա-

ւասարեցնել զերօներով, ապա դէն ձգել ստորակէտները և բաժանել ինչպէս բաժանում ենք ամբողջ թւերը՝ Օրինակ՝

ա. $0,45 \div 0,15 = 3$

$$\begin{array}{r|l} 045 & 015 \\ -45 & 3 \\ \hline 0 & \end{array}$$

բ. $0,3 \div 0,15 = 2$

$$\begin{array}{r|l} 030 & 015 \\ -30 & 2 \\ \hline 0 & \end{array}$$

Վնուել հետեւեալ վարժութիւնները (տասնորդական կոտորակը բաժանել տասնորդական կոտորակի վրայ)։

77.	$8,4 \div 0,4$	$7,4 \div 0,2$	$1,2 \div 0,4$	$0,3 \div 0,5$
	$36,9 \div 0,3$	$25,2 \div 0,9$	$43,6 \div 2,18$	$0,09 \div 0,12$
	$4,5 \div 0,05$	$3,06 \div 0,3$	$0,5 \div 0,15$	$2,7 \div 0,72$
	$9,6 \div 0,16$	$3,24 \div 0,04$	$2,16 \div 3,6$	$0,02 \div 1,25$
78.	$0,8 \div 0,02$	$3,75 \div 3,125$	$21,6 \div 0,09$	$4,735 \div 0,5$
	$0,25 \div 0,005$	$41,4 \div 0,003$	$2,3 \div 2,5$	$25,2 \div 0,03$
	$3,75 \div 2,5$	$0,16 \div 0,008$	$8,1 \div 3,6$	$4,5 \div 0,09$
	$0,2 \div 0,04$	$26,1 \div 0,9$	$0,95 \div 3,8$	$2,121 \div 0,7$

79.	$9,36 \div 36$	$60,3 \div 0,009$	$2,84 \div 4$	$124 \div 0,04$
	$6,93 \div 18$	$349,6 \div 10$	$0,035 \div 5$	$435,28 \div 10$
	$1,69 \div 6,5$	$3,75 \div 100$	$71,1 \div 0,9$	$6,12 \div 1,2$
	$27,81 \div 10$	$22 \div 0,02$	$63 \div 0,7$	$7,2 \div 0,03$

80.	$(23,4 \div 6) \times (0,9 \div 4)$	$(2,84 \div 4) \times (0,8 \div 0,2)$
	$(27,32 \div 4) \times (0,48 \div 0,16)$	$(8,62 \div 0,25) \times (0,75 \div 0,012)$

81.	$(0,49 \div 7) \times (0,64 \div 0,08)$	$(45 \div 0,5) \times (2,7 \div 0,03)$
	$(0,56 \div 0,8) \times (3,6 \div 6)$	$(0,42 \div 0,7) \times (75 \div 0,05)$

82. Խոյից — Սալմաստ 48,96 կիլօմետր է, ձանապարհորդն այդ տարածութիւնն անցաւ 6 ժամում։ Քանի կիլօմետր էր անցնում իւրաքանչիւր ժամում։

83. Վաճառականը գնեց 135,5 բաթման բրինձ 460,7 դոանով և ծախեց 636,85 դոանով: Ո՞րքան շահեց նա իւրաքանչիւր բաթմանի մէջ:

84. Մանրավաճառը 24 դիւթին թաշկինակին վճարեց 374,4 դոան: Ո՞րքան արժէ մի թաշկինակը:

85. Քանի օր կը բաւականանայ 1 գրանքայ թէյը, եթէ օրական գործածւի 0,05 գրանքայ:

86. Հասակաւոր մարդու իւրաքանչիւր քայլը հաւասար է 0,8 մետրի: Քանի քայլ պէտք է անի նա 1,232 կիլոմետր տարածութիւն անցնելու համար:

87. Գորգավաճառը 124,1 թումանով ծախեց մի գորգ: Ո՞րքան է գորգի չափը, եթէ իւրաքանչիւր քառակուսի գէազը գնահատուեց 8,5 թուման:

88. Ո՞րքան արժէ մսի փոնգան, եթէ բաթմանը վաճառուում է 6,4 դոան:

89. Մեր դպրոցում վառելիքայտի համար տարեկան վճարում է 848,7 դոան: Քանի խաւար փայտ է վառուում, եթէ խաւարն արժէ 58,6 դոան:

90. Այգում կար 135 նշենի. դրանից 1,5 անգամ պակաս խնձորենի. խնձորենուց 3,6 անգամ քիչ տանձենի: Քանի տանձենի կար այգում:

ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐ

սասնօղակաւ կոտորակներէ չորս գործողութիւններով.

$$91. (7,14 \div 1,4) + (0,5 \div 2,5) \div (0,16 \div 0,5) + 22,09 =$$

$$92. (10 \div 0,02) - (0,011 \div 0,5) - (1,32 \div 8) + 15,32 =$$

$$93. (1,7 \div 4) + (5 \div 0,002) - (8,1 \div 3,6) + 0,005 =$$

$$94. (15 : 1,2) \times (0,7 : 1,4) - (0,1 : 0,25) \times (3 : 1,5) =$$

$$95. [(1 : 1,6) \times (13 : 5,2)] + [(9 : 3,6) \times (1 : 0,25)] =$$

$$96. [(14 : 0,7) \times (0,4 : 5)] + [(2,1 : 1,75) : (0,6 : 0,24)] =$$

$$97. [(7,8 : 13) \times (15 : 0,48)] - [(1,1 : 8) \times (0,8 : 0,025)] =$$

$$98. [(15 - 1,2) \times (0,7 : 1,4)] - [(0,1 : 0,25) \times (3 : 1,5)] =$$

$$99. [(1 : 12,5) + (0,168 : 0,15)] \times (2,1 - 0,6) : 0,09 =$$

$$100. [(12 : 1,5) + (13,2 : 11) + (0,7 : 1,75)] \times (0,276 : 0,23) =$$

$$101. \frac{5,2 + 17,25 - (3,36 : 0,3)}{(2,7 : 0,18) + (0,65 : 0,13)} : 0,05$$

102. Վաճառականը 3 թոփ մահուդ ունէր. առաջին թոփը 32,5 գէազ էր, երկրորդը՝ 1,25 գէազով աւելի էր առաջինից, իսկ երրորդը՝ 1,8 անգամ պակաս էր երկրորդից: Քանի գէազ էր երրորդ թոփը:

103. Մի ընտանիք ամսական ուտելիքի վճարում է 28 թուման 5 դոան, լուսաւորութեան և վառելիքի՝ 58,6 դոան, զգեստների և այլ պէտքերի՝ 12 թուման 50 սանտիմ: Ո՞րքան է այդ ընտանիքի տարեկան ծախսը:

104. Մրգավաճառը գնեց 12,5 բաթման խաղող, բաթմանը 1,9 դոանով և 8,25 բաթման բալ, բաթմանը՝ 1,8 դոանով: Նա իւրաքանչիւր փոնգան վաճառեց 0,15 դոանով: Ո՞րքան շահեց բոլորի մէջ:

105. Վաճառականը գնեց 391,5 բաթման բրինձ և լցրեց տոպրակների մէջ, իւրաքանչիւրում՝ 14,5 բաթման: Բրինձը վաճառեց և իւրաքանչիւր տոպրակից շահեց 21,2 դոան: Ո՞րքան շահեց ընդամենը:

106. Փահլաւի նաւահանգստից առաւօտեան ժամը 9-ին մեկնեց մի շոգենաւ: 2 ժամ յետոյ ճանապարհուց մի ուրիշ նաւ, մի ժամուս անցնելով 34,32 կիլոմետր և հասաւ առաջինին երեկոյեան ժամը 9-ին: Քանի կիլոմետր էր անցնում առաջին նաւը մի ժամուս:

✓ 107. Խոհարարը գնեց 14 փոնգա բրինձ, փոնգան 0,5

ղռանով, 12 փոնգա գետնախնձոր՝ փոնգան 0,05 զռանով և 4 փոնգա շաքարավազ. բոլորին վճարեց 9,8 զռան. Ո՞րքան արժէ շաքարավազի փոնգան.

108. 1,56 մետր շրջագիծ ունեցող անիւր մի տարածութեան վրայ 24 պտոյտ արաւ. Քանի պտոյտ կանի նոյն տարածութեան վրայ 0,39 մետր շրջագիծ ունեցող անիւր.

109. Վաճառականը 228,5 բաթման, բաթմանը 2 զռան 2 շահիանոց ալիւրը փոխանակեց 60 բաթման շաքարի հետ. Ո՞րքանով պէտք է ծախի շաքարի բաթմանը, որպէսզի 45 զռան 15 սանտիմ վաստակի:

110. Դերձակը գնեց 10,5 գէազ մահուդ, գէազը 35,5 զռանով և կարեց 4 ձեռք զգեստ. Աստաուի և կոճակների համար վճարեց 58,1 զռան. Ո՞րքան է հաշուել իւրաքանչիւր զգեստի կարելավարձը, եթէ պատրաստի զգեստները վաճառեց 640 զռ. 85 սմ.:

111. Թէհրանից և Թաւրիզից միաժամանակ իրար հանդէպ դուրս եկան երկու ինքնաշարժ. մէկն անցնում է մի ժամում 24,5 կիլոմետր, միւսը մի ժամում՝ 22,9 կիլոմետր. Քանի ժամից յետոյ երկու ինքնաշարժներն իրար կը հանդիպեն, եթէ ճանապարհին ուշացել են 12 ժամ և եթէ այդ երկու քաղաքների միջի տարածութիւնն է 597,24 կիլոմետր:

112. Դինեվաճաուր 16 շիշ ջուրը խառնեց 20,5 շիշ, շիշը 1,4 զռանանոց գինու հետ. Ո՞րքանով պէտք է ծախէ խառնուրդի շիշը, որպէսզի վաստակի 15,1 զռան:

113. Մի ծառայող տարեկան ստանում է 110,4 թուման. 7,5 ամիս ծառայելուց յետոյ նա պաշտօնից հեռացաւ, ստանալով 52,12 թուման և մի վերարկու: Ո՞րքան է գնահատւած վերարկուն:

114. Թէհրանից—Մէշէդ 840,7 կիլոմետր տարածութիւն է. ճանապարհորդն առաջին օրն անցաւ 64,4 կիլո-

մետր, երկրորդ օրը՝ 82,2 կիլոմետր, իսկ մնացած ճանապարհն անցաւ 11 օրում, իւրաքանչիւր օր հաւասար տարածութիւն կտրելով. Քանի կիլոմետր էր անցնում օրական:

115. Ոսկերիչը ձուլեց և իրար հետ խառնեց երեք կտոր արծաթ. առաջին կտորը քաշում էր 0,75 կիլոգր., երկրորդը՝ 0,225 կիլոգրամով թեթեւ էր առաջինից. իսկ երրորդը 10 անգամ ծանր էր, քան երկու առաջին կտորները միասին: Ո՞րքան էր ամբողջ ձուլի քաշը:

116. 83,235 մետր երկարութիւն ունեցող պարանը չորս կտոր արին. Առաջին կտորի երկարութիւնն է 30,175 մետր, երկրորդ կտորը 5 անգամ կարճ է առաջինից. իսկ երրորդ կտորի երկարութիւնը հաւասար է առաջին երկու կտորների երկարութեան գումարին: Ո՞րքան է չորրորդ կտորի երկարութիւնը:

117. Ճանապարհորդը 27 ժամ ձիով ճանապարհորդեց, իւրաքանչիւր ժամում անցնելով 10,5 կիլոմետր և 9,75 ժամ էլ՝ երկաթուղով. նա անցաւ ընդամենը 580,875 կիլոմետր: Ո՞րքան է անցել գնացքը ամեն մի ժամում:

118. Թաւրիզից—Ջուլֆա միաժամանակ իրար հանդէպ դուրս եկան գնացքն ու ինքնաշարժը. Թաւրիզից մեկնող գնացքը մի ժամում անցնում էր 25,2 կիլոմետր, իսկ ինքնաշարժը մի ժամում՝ 31,4 կիլոմետր. Քանի ժամից և Թաւրիզից ո՞րքան հեռաւորութեան վրայ գնացքն ու ինքնաշարժն իրար կը հանդիպեն, եթէ Թաւրիզից—Ջուլֆա 141,5 կիլոմետր է:

119. Ռաշտից Թէհրան մեկնեց մի ապրանքատար ինքնաշարժ, իսկ 3 ժամ յետոյ նոյն քաղաքից մեկնեց փոստատար ինքնաշարժը. Առաջին ինքնաշարժը երկու քաղաքների միջի տարածութիւնը, որ 319,8 կիլոմետր է, անցնում է 13 ժամում. Քանի ժամից յետոյ և Թէհրանից ո՞րքան հեռաւորութեան վրայ փոստատար ինքնաշարժը կը հասնի ապրանքատարին, եթէ մի ժամում անցնում է 33,6 կիլոմետր տարածութիւն:

Մի կաթնավանառի միօրեայ մուսֆն ու ելփր.

Թաւրիզ, 5 ապրիլի 1928 թ.

ՄՈՒՏՔ

Հաշիւկշիռ

ԵԼՔ

	Ղաւն	սնս.		Ղաւն	սնս.
Վանառած է			Գնւած է		
կաթ 8.5 բաթ.	20	40	խոտ .	18	70
կարագ 1 „	30	50	մշակի վճարած	2	45
մածուն 2 „	4	80	տնային ծախսեր	14	50
սեր 0,5 „	7	60	կանխիկ մտում է	66	40
զանձւած ապառիկ	38	75			
	102	05		102	05

Վնուել հետեւեալ խնդիրները եւ տւած օրինակի ձեւով կազմել հաւելեցիւր.

120. Խանութպանը վաճառեց 14 բաթման շաքար, բաթմանը՝ 8,4 դոանով, 4 գրւանքայ թէյ, գրւանքան՝ 7,6 դոանով, 3 բաթման բրինձ, բաթմանը՝ 9,45 դոանով. Ո՞րքան դրամ մնաց խանութպանի մօտ այդ օրւայ մուսֆից, եթէ նա նոյն օրը խանութի վարձ վճարեց 25,6 դրւան, ծառայողին ռոճիկ տւեց 65 դոան և տան համար ծախսեց 18,75 դոան.

121. Ծառայողին օրւայ ծախսերի համար տրւած է 1 թուման. նա հետեւեալ գնումները կատարեց. 0,5 բաթման միս, վճարեց՝ 4,2 դոան, շաքար՝ 0,25 բաթման՝ 2,1 դո., թէյ՝ 1 դոան. Ո՞րքան դրամ վերադարձրեց.

Նոյն ձեւով կազմեցէք ձեր տասն կամ իսանոռթի միօրեայ հաշիւկշիւր.

ՀԱՍԱՐԱԿ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

Կ Ո Տ Ո Ր Ա Կ

Երբ մի ամբողջը բաժանում ենք հաւասար մասերի, այդ մասերը կոչւում են կոտորակ:

Երբ ամբողջը բաժանում ենք 2 հաւասար մասերի, այդ մասերից իւրաքանչիւրը կոչւում է կէս կամ մէկ երկուրդ և գրւում է այսպէս $\frac{1}{2}$ կամ $\frac{1}{2}$:

Երբ ամբողջը բաժանում ենք 4 հաւասար մասերի, այդ մասերից իւրաքանչիւրը կոչւում է քառուրդ մաս կամ մէկ չորրորդ և գրւում է այսպէս $\frac{1}{4}$ կամ $\frac{1}{4}$:

Երբ ամբողջը բաժանում ենք 3 հաւասար մասերի, այդ մասերից իւրաքանչիւրը կոչւում է մէկ երրորդ և գրւում է այսպէս՝ $\frac{1}{3}$ կամ $\frac{1}{3}$:

Երբ ամբողջը բաժանում ենք 8 հաւասար մասերի, այդ մասերից իւրաքանչիւրը կոչւում է մէկ ութերորդ և գրւում է այսպէս՝ $\frac{1}{8}$ կամ $\frac{1}{8}$:

Մէկ ամբողջը եթէ բաժանենք 9 հաւասար մասերի, կստանանք մէկ իններորդ ($\frac{1}{9}$), եթէ բաժանենք 15 հաւասար մասերի, կստանանք մէկ տասնհինգերորդ ($\frac{1}{15}$), և այլն.

Երբ միութիւնը բաժանում ենք 8 հաւասար մասերի, դրանցից մէկ մասը կոչւում է մէկ ութերորդ, երկու մասը կոչւում է երկու ութերորդ և գրւում է այսպէս $\frac{2}{8}$, երեք մասը կոչւում է երեք ութերորդ՝ $\frac{3}{8}$ և այլն:

Կոտորակները գրելու համար գործ են ածում երկու թիւ. մէկը ցոյց է տալիս, թէ ամբողջը բանի հաւասար մասերի է բաժանուած. այդ թիւը կոչուում է կոտորակի յոյճաւար. Միւս թիւը ցոյց է տալիս, թէ այդ մասերից քանիսն է վերցրած. այդ թիւը կոչուում է համարիչ. Կոտորակի համարիչը գրուում է գծից վերեւ, իսկ յայտարարը՝ գծից ներքեւ. Օրինակ՝ երեք հինգերորդական կոտորակը գրուում ենք այսպէս.

$$\frac{3}{5} \text{ համարիչ կամ } \frac{3}{5}$$

Կարգալ հետեւեալ կոտորակները

$$122. \frac{1}{2}, \frac{1}{3}, \frac{1}{4}, \frac{1}{5}, \frac{1}{12}, \frac{1}{16}, \frac{1}{19}, \frac{1}{23}, \frac{1}{42},$$

$$123. \frac{2}{5}, \frac{2}{7}, \frac{2}{9}, \frac{3}{7}, \frac{3}{11}, \frac{4}{5}, \frac{5}{9}, \frac{5}{12}, \frac{3}{34},$$

$$124. \frac{6}{7}, \frac{7}{8}, \frac{8}{9}, \frac{9}{13}, \frac{12}{13}, \frac{21}{25}, \frac{34}{45}, \frac{29}{31},$$

Գրել քանոցաններով հետեւեալ կոտորակները.

Երկու հինգերորդ, երեք ութերորդ, չորս իններորդ, եօթ տասնմէկերորդ, տասներկու տասներեքերորդ, քսան երեք քսանհինգերորդ, ութ տասնհինգերորդ, քսաներկու երեսուներեքերորդ, ինն տասնեօթերորդ, քսանմէկ քսան եօթերորդ.

125. Հայրը մի խնձորը 2 հաւասար մասերի բաժանեց. մի մասը տւեց տղին, իսկ միւս մասը՝ աղջկան. Խնձորի ո՞ր մասն ստացաւ տղան, ո՞ր մասն՝ աղջիկը:

126. Մայրը մի գաթան 4 հաւասար մասերի բաժանեց և տւեց իր երեխաներին. Գաթայի ո՞ր մասն ստացաւ նրանցից ամէն մէկը:

127. Ուսուցիչը մի թերթ թուղթը բաժանեց 8 աշակերտի հաւասարապէս. Թերթի ո՞ր մասն ստացաւ նրանցից ամէն մէկը:

128. Հայրը մի ձմերուկը 8 հաւասար մասերի բաժա-

նեց՝ 5 մասը տւեց երեխաներին, իսկ 3 մասը պահեց. Ո՞րքան ձմերուկ ստացան երեխաները և որքան պահեց.

129. Ուսուցիչը մի թերթ թուղթը 6 հաւասար մասերի բաժանեց. Մի մասը պահեց իր մօտ իսկ մնացածը բաժանեց երեխաներին. Թերթի ո՞ր մասը պահեց իր մօտ և ո՞ր մասը բաժանեց երեխաներին:

130. Մի բաթման ալիւրից թխեցին 16 միատեսակ հաց. Ո՞րքան ալիւրից թխեցին 1 հացը, 5 հացը, 11 հացը, 14 հացը:

131. Երկու մարդ միասին մի թոփ մահուդ գնեցին և բաժանեցին իրենց մէջ հաւասար կերպով: Թոփի ո՞ր մասն ընկաւ նրանցից իւրաքանչիւրին:

132. Երեք գիւղացի միասին մի կտոր հող առան և հաւասարապէս բաժանեցին իրենց մէջ. Հողի ո՞ր մասն ստացաւ նրանցից իւրաքանչիւրը:

133. Աւազանը լցւում է 4 ժամում. Մի ժամում աւազանի ո՞ր մասը կը լցւի:

134. Բաթմանի ո՞ր մասն է կազմում 1, 3, 4, 7, 8, 9, 13, 14 փոնկան:

135. Օրւայ ո՞ր մասն է կազմում 3, 5, 7, 9, 13 ժամը:

136. Փութի ո՞ր մասն է կազմում 1, 5, 9, 11, 17, 21 գրանբան:

137. Գէազի ո՞ր մասն է կազմում 1, 3, 5, 7, 11, 15 գերէն:

138. Ղուանի ո՞ր մասն է կազմում 1, 3, 7, 9 շահին:

ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԹԻԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՅ

Փոքր թիւը մեծ թիւ վրայ բաժանելիս. պէտք է բաժանելին գրել համարիչ, իսկ բաժանարարը՝ յայտարար:

$$\text{Օրինակ՝ } 5 \div 8 = \frac{5}{8}$$

Եթէ բաժանելուց յետոյ մնացորդ ստացւի, այն ժա-

մանակ քանորդի մօտ կոտորակ են գրում, որի համարիչը պիտի լինի մնացորդը, իսկ յայտարարը՝ բաժանարարը:

$$\text{Օրինակ՝ } 27 : 5 = 5 \frac{2}{5}:$$

Վնել բաժանման հետեւեալ վարժութիւնները.

139.	$3 \div 4$	$5 \div 9$	$6 \div 13$	$9 \div 11$	$17 \div 20$
	$5 \div 7$	$10 \div 11$	$4 \div 15$	$8 \div 23$	$25 \div 31$
	$6 \div 7$	$7 \div 13$	$8 \div 19$	$3 \div 34$	$39 \div 43$
	$3 \div 8$	$8 \div 15$	$7 \div 23$	$6 \div 19$	$59 \div 61$
140.	$3 \div 2$	$5 \div 2$	$22 \div 5$	$89 \div 25$	$126 \div 14$
	$4 \div 3$	$8 \div 3$	$36 \div 7$	$49 \div 5$	$235 \div 21$
	$8 \div 5$	$12 \div 5$	$43 \div 6$	$94 \div 8$	$186 \div 33$
	$9 \div 2$	$15 \div 4$	$71 \div 8$	$75 \div 14$	$145 \div 17$

141. 4 մարդ միասին 1 բաթման խաղող պնեցին և իրար մէջ հաւասար բաժանեցին: Բաթմանի ո՞ր մասը հասաւ իւրաքանչիւրին:

142. 5 հոգի միասին գնեցին 3 գրանրայ թէյ և բաժանեցին իրար մէջ հաւասարապէս: Ո՞րքան թէյ ստացաւ իւրաքանչիւրը:

143. 7 արշին չիթից 3 միատեսակ շապիկ կարեցին: Ո՞րքան չիթ գնաց ամէն մի շապիկի համար:

144. Հնձուրը 7 օրայ համար ստացաւ 25 ղոան: Ո՞րքան է նրա օրավարձը:

145. Երկաթուղին 6 ժամում անցաւ 175 կիլոմետր տարածութիւն: Քանի կիլոմետր է անցնում մի ժամում:

146. Մի ընտանիք ամսական ծախսում է 375 ղոան: Ո՞րքան է ծախսում օրական:

147. 8 աշակերտ միասին գնեցին 149 թերթ թուղթ և բաժանեցին իրենց մէջ հաւասարապէս: Քանի թերթ թուղթ ստացաւ իւրաքանչիւրը:

ԱՆԿԱՆՈՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՅԻՅ

ԱՄՐՈՂՋՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ

Կոտորակները լինում են կանոնաւոր և անկանոն. Կանոնաւոր կոտորակների համարիչը յայտարարից պակաս է լինում: Օրինակ՝ $\frac{5}{8}$, $\frac{7}{9}$, $\frac{11}{15}$ և այլն: Անկանոն կոտորակների համարիչը յայտարարից աւելի է լինում կամ հաւասար: Օրինակ՝ $\frac{5}{4}$, $\frac{8}{3}$, $\frac{12}{5}$, $\frac{4}{4}$, $\frac{3}{3}$, $\frac{6}{6}$ և այլն:

Անկանոն կոտորակից ամբողջ թւեր հանելու համար, պէտք է համարիչը բաժանել յայտարարի վրայ:

$$\text{Օրինակ՝ } \frac{23}{4} = 23 \div 4 = 5 \frac{3}{4}$$

Հետեւեալ անկանոն կոտորակներից հանել ամբողջ թւեր.

$$148. \quad \frac{8}{15}, \frac{9}{2}, \frac{12}{5}, \frac{14}{3}, \frac{25}{4}, \frac{32}{12}, \frac{45}{14}, \frac{67}{19}, \frac{124}{27}, \frac{151}{19}, \frac{241}{17}, \frac{370}{25}, \frac{425}{37}, \frac{390}{41}:$$

Երբ ամբողջի հետ կայ նաև կոտորակ, այդպիսի թիւը կոչւում է խառն թիւ, կամ խառն կոտորակային թիւ:

$$\text{Օրինակ՝ } 5 \frac{3}{4}$$

Հինգ ամբողջ երեք չորրորդը խառն թիւ է:

Խառն կոտորակային թիւն անկանոն կոտորակ դարձնելու համար ամբողջը բազմապատկում ենք կոտորակի յայտարարի վրայ, աւելացնում ենք համարիչը և ստացածը գրում ենք համարիչ, իսկ յայտարարը պահում նոյնը:

$$\text{Օրինակ՝ } 5 \frac{3}{4} = 5 \times 4 + 3 = \frac{23}{4}$$

Հետեւեալ խառն թւերը դարձնել անկանոն կոտորակներ.

$$149. \quad 2 \frac{3}{4}, 5 \frac{3}{8}, 7 \frac{5}{9}, 12 \frac{4}{5}, 40 \frac{2}{9}, 9 \frac{2}{10}, 24 \frac{5}{13}:$$

$$150. \quad 21 \frac{4}{5}, 25 \frac{2}{3}, 18 \frac{13}{14}, 9 \frac{17}{19}, 7 \frac{24}{33}, 85 \frac{3}{7}:$$

151. Քանի կէս ունի մէկ միասորը:

Քանի ութերորդական մաս ունի մէկ գէտը:

152. Քանի ութերորդական մաս ունեն 2, 3, 4, 5, 6 միավորները:

153. Քանի միավոր ունեն երկու կեսերը:

154. Ուսուցիչը 4 աշակերտի կէս-կէս թերթ թուղթ բաժանեց: Քանի թերթ թուղթ բաժանեց ուսուցիչը:

155. Մի քառորդ փոնգա ալիւրից թխեցին 1 գաթայ: Քանի փոնգա ալիւրից կը թխեն նոյն տեսակի 24 գաթան:

156. Ճաշարանում յաճախորդին կերակրի հետ տալիս էին օրական կէս փոնգա միս: Օրական բանի բաթման միս էին գործածում 65 յաճախորդի համար:

157. Խանութպանն ամէն մի գնողի ծախեց մի ութերորդական գրանքայ թէյ: Քանի գրանքայ թէյ ծախեց նա 56 գնողի:

158. Մի թաշկինակի համար գործ է ածուում մէկ հինգերորդական մետր բաթան: Քանի մետրից դուրս կը գայ նոյն մեծութեան 40 թաշկինակը:

159. Երեխան օրական խմում է մէկ ութերորդական բաթման կաթ: Քանի բաթման կաթ կը խմի 24 օրում:

160. Քանի ամբողջ միավոր և միավորի մասեր կան $\frac{9}{2}$ -ում, $\frac{10}{3}$ -ում, $\frac{29}{4}$ -ում, $\frac{75}{9}$ ում, $\frac{86}{12}$ -ում, $\frac{95}{16}$ ում:

ՆՄԱՆ ՅԵՅՏԱՐԱՐ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

Միևնոյն յայտարար ունեցող կոտորակները կոչուում են միասեւակ կոտորակներ:

Միատեսակ կոտորակները գումարելիս, գումարում ենք նրանց համարիչները, ստացած գումարը զնում ենք համարիչ, իսկ յայտարարը պահում ենք նոյնը:

$$\text{Օրինակ՝ ա. } \frac{1}{5} + \frac{2}{5} = \frac{3}{5}:$$

$$\text{բ. } \frac{1^6}{7} + \frac{2^3}{7} = \frac{3^9}{7} = \frac{4^2}{7}:$$

ԳՐԱՄԱՐԵԼԻ ՏԵՏԵՆԱԿ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԸ

$$\begin{array}{llll} 161. & \frac{1}{3} + \frac{1}{3} & \frac{2^1}{4} + \frac{4^1}{4} & \frac{4}{5} + \frac{2}{5} + \frac{3}{5} & \frac{3^1}{4} + \frac{3}{4} \\ & \frac{3}{5} + \frac{1}{5} & \frac{3^2}{5} + \frac{6^1}{5} & \frac{2}{11} + \frac{5}{11} + \frac{9}{11} & \frac{7}{8} + \frac{5^3}{8} \\ & \frac{6}{7} + \frac{1}{7} & \frac{8^1}{3} + \frac{2^2}{3} & \frac{7}{18} + \frac{5}{18} + \frac{13}{18} & \frac{9^1}{12} + \frac{11}{12} \\ & \frac{4}{5} + \frac{1}{5} & \frac{7^2}{7} + \frac{1^5}{7} & \frac{2}{23} + \frac{14}{23} + \frac{9}{23} & \frac{7^5}{9} + \frac{7}{9} \\ & \frac{3}{8} + \frac{1}{8} & \frac{6^1}{8} + \frac{2^3}{8} & \frac{7}{34} + \frac{13}{34} + \frac{25}{34} & \frac{5^6}{15} + \frac{11}{15} \end{array}$$

162. Խանութպանը մէկին ծախեց $\frac{3}{8}$ բաթման բրինձ, իսկ մի ուրիշին՝ $\frac{5}{8}$ բաթման բրինձ: Ընդամենը որքան բրինձ ծախեց:

163. Ճանապարհորդն առաջին օրն անցաւ $\frac{6^1}{5}$ ֆարսաղ տարածութիւն, երկրորդ օրը՝ $\frac{2}{5}$ ֆարսաղ աւելի: Երկու օրում որքան տարածութիւն անցաւ:

164. Մի ձեռք զգեստի համար դերձակը գործածեց $\frac{2^3}{4}$ գէազ մահուդ. իսկ մի վերարկուի համար՝ $\frac{3^1}{4}$ գէազ մահուդ: Քանի գէազ մահուդ գործածեց դերձակը:

165. Դիւղացին ծախեց $\frac{175^1}{8}$ բաթման ցորեն և $\frac{86^3}{8}$ բաթման աւելի՝ գարի: Քանի բաթման հացահատիկ վաճառեց գիւղացին:

166. Աշակերտը դպրոցում զբաղւում է $\frac{4^1}{4}$ ժամ, տանը՝ $\frac{2^3}{4}$ ժամ: Ընդամենը բանի ժամ է պարապում նա:

167. Խանութպանը վաճառեց 3 թոփ մահուդ. առաջին թոփը $\frac{32^3}{16}$ գէազ էր, երկրորդը՝ $\frac{30^5}{16}$ գէազ, իսկ երրորդը՝ $\frac{3^3}{16}$ գէազով աւելի էր երկրորդից: Քանի գէազ էր 3 թոփ մահուդը:

ՆՄԱՆ ՅԵՅՏԱՐԱՐ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ՀԱՆՈՒՄԸ

Միատեսակ կոտորակների հանման ժամանակ պիտի հանել համարիչը համարիչից և մնացորդը գրել համարիչ, յայտարարը պահելով առաջւայ ընդհանուր յայտարարը:

$$\text{Օրինակ՝ ա. } \frac{8}{15} - \frac{6}{15} = \frac{2}{15}:$$

$$\text{բ. } \frac{2^3}{8} - \frac{5}{8} = \frac{1^6}{8}:$$

Վնուել հետեւեալ կոտորակների համաճ վարժութիւնները.

$$168. \begin{array}{cccc} \frac{3}{8}-\frac{1}{8} & 1-\frac{2}{9} & 15-\frac{3^4}{9} & 10^3/\frac{7}{7}-6^1/\frac{7}{7} \\ \frac{5}{9}-\frac{4}{9} & 1-\frac{2}{5} & 19-6^1/\frac{3}{3} & 5^3/\frac{8}{8}-2^1/\frac{8}{8} \\ \frac{12}{29}-\frac{9}{29} & 2-\frac{3}{8} & 47-12^4/\frac{7}{7} & 9^1/\frac{8}{8}-3^5/\frac{8}{8} \\ \frac{15}{21}-\frac{4}{21} & 3-\frac{6}{7} & 25-15^3/\frac{8}{8} & 27^5/\frac{11}{11}-7^8/\frac{11}{11} \\ \frac{7}{15}-\frac{4}{15} & 5-\frac{12}{13} & 27-20^1/\frac{12}{12} & 32^1/\frac{9}{9}-10^5/\frac{9}{9} \end{array}$$

169. Ալափը խանութում ունէր $\frac{5}{8}$ խալար ածուխ. $\frac{3}{8}$ խալարը ծախեց. Ո՞րքան ածուխ մնաց խանութում.

170. Խոհարարը գնեց 2 բաթման բրինձ. Առաջին օրը գործածեց $\frac{3}{8}$ բաթման, երկրորդ օրը՝ $\frac{1}{8}$ բաթման աւելի գործածեց. Ո՞րքան բրինձ մնաց:

171. Մի մարդ մի ժամում անցաւ 7 կիլօմետր տարածութիւն. իսկ երկրորդ ժամում նրանից $\frac{3}{4}$ կիլօմետր պակաս. Քանի կիլօմետր տարածութիւն անցաւ 2 ժամում:

172. Հացթուխն ունէր 3 տոպրակ ալիւր: Առաջին տոպրակում կար $12\frac{1}{4}$ բաթման ալիւր, երկրորդում՝ $\frac{3}{4}$ բաթման պակաս, իսկ երրորդում՝ $1\frac{1}{4}$ բաթման առաջինից աւելի: Ընդամենը ո՞րքան ալիւր ունէր հացթուխը:

173. Մրգավաճառն ունէր $87\frac{5}{8}$ բաթման խաղող. Առաջին օրը ծախեց $25\frac{3}{8}$ բաթման, երկրորդ օրը՝ $2\frac{1}{8}$ բաթմանով պակաս. իսկ մնացածը չամրչ պատրաստեց: Քանի բաթման մնաց չամրչի համար:

174. Վաճառականն իր ունեցած ապրանքի $\frac{1}{8}$ մասը ծախեց, $\frac{5}{8}$ մասը փոխադրեց ուրիշ քաղաք. Ապրանքի ո՞ր մասը մնաց:

ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄԸ

ա. Կոտորակը ամբողջ թիւ վրայ բազմապատկելու համար, ամբողջով պիտի բազմապատկենք կոտորակի համարիչը, ստացած արտադրեալը գրենք համարիչ և բաժանենք կոտորակի յայտարարի վրայ:

Օրինակ՝ $\frac{3}{5} \times 4 = 1\frac{12}{5} = 2\frac{2}{5}$.

բ. Խառն կոտորակային թիւը ամբողջի վրայ բազմապատկելու համար բազմապատկելին պիտի դարձնենք անկանոն կոտորակ և բազմապատկենք. կամ թէ առանձին-առանձին պէտք է բազմապատկենք ամբողջն ու կոտորակը և արտադրեալները գումարենք. Օրինակ՝

ա. ձեւ $2\frac{1}{2} \times 7 = \frac{5}{2} \times 7 = \frac{5 \cdot 7}{2} = \frac{35}{2} = 17\frac{1}{2}$

բ. ձեւ $1\frac{1}{2} \times 7 = \frac{1 \cdot 7}{2} = \frac{7}{2} = 3\frac{1}{2} \quad 2 \times 7 = 14$
 $3\frac{1}{2} + 14 = 17\frac{1}{2}$.

Վնուել բազմապատկման հետեւեալ վարժութիւնները.

$$175. \begin{array}{cccc} \frac{3}{5} \times 2 & \frac{3}{2} \times 8 & 2^1/\frac{5}{5} \times 4 & 12^3/\frac{8}{8} \times 4 \\ \frac{7}{8} \times 3 & \frac{3}{16} \times 5 & 3^4/\frac{7}{7} \times 6 & 15^5/\frac{7}{7} \times 8 \\ \frac{5}{9} \times 4 & \frac{8}{31} \times 9 & 7^2/\frac{9}{9} \times 8 & 20^1/\frac{3}{3} \times 16 \\ \frac{6}{11} \times 7 & \frac{13}{45} \times 4 & 7^1/\frac{9}{9} \times 3 & 25^4/\frac{7}{7} \times 7 \\ \frac{8}{15} \times 9 & \frac{19}{23} \times 12 & 3^8/\frac{11}{11} \times 5 & 7^1/\frac{3}{3} \times 4 \end{array}$$

176 Մէկ ղռանով կարելի է գնել $\frac{3}{8}$ գէազ բաթման. Քանի գէազ բաթման կարելի է գնել 6 ղռանով.

177. Մի ընտանիք ամսական գործ է ածում $1\frac{3}{4}$ բաթման իւր. Քանի բաթման իւր կը գործածէ այդ ընտանիքը մի տարում:

178. Ճանապարհորդը մի ժամում անցնում է $6\frac{2}{3}$ կիլօմետր տարածութիւն. Քանի կիլօմետր տարածութիւն կանցնի նա 4 ժամում:

179. Ջրաղաց բերին մի անգամ 4 ջալ ցորեն, որոնցից իւրաքանչիւրում կար $12\frac{5}{8}$ բաթման ցորեն. Երկրորդ անգամ բերին 6 ջալ, իւրաքանչիւրում կար $11\frac{1}{8}$ բաթման ցորեն. Ընդամենը քանի բաթման ցորեն բերին ջրաղաց:

180. Սալմաստից—Ուրմիա $86\frac{3}{8}$ կիլօմետր է. Սալմաստից դուրս եկող ճանապարհորդը 7 ժամ, ժամը $3\frac{5}{8}$ կիլօմետր տարածութիւն անցաւ և 5 ժամ, ժամը $3\frac{1}{8}$ կիլօմետր: Քանի կիլօմետր տարածութիւն մնաց անցնելու մինչև Ուրմիա:

ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ա. Կոտորակն ամբողջի վրայ բաժանելու համար, պէտք է ամբողջով բազմապատկենք կոտորակի յայտարարը, ստացած արտադրեալը կը լինի յայտարար, իսկ համարիչը կը մնայ նոյնը. Օրինակ՝ $\frac{1}{3} \div 5 = \frac{1}{3 \cdot 5} = \frac{1}{15}$

բ. Խառն կոտորակային թիւը ամբողջի վրայ բաժանելու համար, բաժանելին պիտի դարձնենք անկանոն կոտորակ և ապա բաժանենք այնպէս, ինչպէս կոտորակը բաժանում ենք ամբողջի վրայ: Օրինակ՝

$$2\frac{1}{2} \div 3 = \frac{5}{2} \div 3 = \frac{5}{6}.$$

Վեճել բաժանման հետեւեալ վարժութիւնները.

180.	$\frac{3}{4} \div 3$	$\frac{1}{2} \div 3$	$2\frac{1}{4} \div 3$	$5\frac{5}{8} \div 9$
	$\frac{1}{9} \div 2$	$\frac{1}{6} \div 5$	$5\frac{1}{5} \div 9$	$2\frac{3}{5} \div 4$
	$\frac{2}{3} \div 2$	$\frac{2}{5} \div 3$	$3\frac{2}{3} \div 5$	$15\frac{1}{3} \div 2$
	$\frac{5}{3} \div 3$	$\frac{9}{10} \div 3$	$2\frac{1}{8} \div 6$	$12\frac{2}{7} \div 3$
	$\frac{4}{5} \div 2$	$\frac{11}{18} \div 6$	$4\frac{1}{5} \div 3$	$41\frac{2}{3} \div 7$

181. 3 հոգի օրական ուտում են $\frac{3}{8}$ բաթման հաց. Ո՞րքան է ուտում մի հոգին:

182. Խանութպանը 4 գնողի ծախսեց $\frac{15}{16}$ գրանքայ թէյ. Ո՞րքան թէյ ստացաւ իւրաքանչիւր գնողը:

183. 5 բանուոր միասին գործելով ստացան $13\frac{1}{15}$ ղոան և հաւասարապէս բաժանեցին. Ո՞րքան ստացաւ իւրաքանչիւր բանուորը:

184. Ինքնաշարժը 6 ժամում անցաւ $202\frac{1}{5}$ կիլոմ. տարածութիւն. Ո՞րքան տարածութիւն է անցնում մի ժամում:

185. Հայրը $65\frac{1}{4}$ տարեկան է, որդին նրանից 2 անգամ փոքր է: Քանի տարեկան է որդին:

186. Վաճառականը ծախեց $3\frac{4}{5}$ խաւար նուշ. նրանից 7 անգամ պակաս չամիչ: Ո՞րքան չամիչ ծախեց:

187. Մի ընտանիք ամսական ուտելիքի համար ծախսում է $25\frac{2}{5}$ թուման, հագուստի համար՝ $6\frac{3}{5}$ թուման, վառելիքի համար՝ 2 անգամ աւելի հագուստի ծախսից: Ո՞րքան է ընտանիքի իւրաքանչիւր անդամի տարեկան ծախսը, եթէ ընտանիքի անդամները 4 հոգի են:

188. 4 հոգի միասին գնեցին 28 զէազ մահուդ. առաջինը վերցրեց մահուդի $\frac{1}{8}$ մասը, երկրորդը՝ 4 զէազ նրանից աւելի, իսկ երրորդը՝ 3 անգամ երկրորդից պակաս: Ո՞րքան մահուդ ստացաւ չորրորդը:

ԱՐԱՐԱԿԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՀՌՈՄԷԱԿԱՆ ԹԻԱՆՇԱՆՆԵՐ

Արա- բական	Հայկա- կան	Հռոմէա- կան	Արա- բական	Հայկա- կան	Հռոմէա- կան
1	ա	I	20	ի	XX
2	բ	II	30	լ	XXX
3	գ	III	40	խ	XL
4	դ	IV	50	ծ	L
5	ե	V	60	կ	LX
6	զ	VI	70	չ	LXX
7	է	VII	80	շ	LXXX
8	ը	VIII	90	ղ	XC
9	թ	IX	100	ճ	C
10	ժ	X	200	ւ	CC
11	ժա	XI	300	թ	CCC
12	ժբ	XII	400	ն	CD
13	ժգ	XIII	500	ձ	D
14	ժդ	XIV	600	ո	DC
15	ժե	XV	700	զ	DCC
16	ժզ	XVI	800	յ	DCCC
17	ժէ	XVII	900	ը	CM
18	ժը	XVIII	1000	մ	M
19	ժթ	XIX			

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

I ԾԱՍ

194. 582 թուման.
 195. 43 ղուան բ. վաճառ.
 196. 948 թուման.
 197. 680 ղուան.
 198. 239 կիլոմետր.
 199. 246 ղուան.
 200. 329 ղուան.
 201. 664 ղուան.
 202. 816 ղուան.
 203. 390 տող.
 204. 768 ղուան.
 205. 125 ղուան.
 206. 12 գէազ 6 փոնղա.
 207. 5 մետր 25 սանտ.
 232. 138 թուման.
 233. 792 փութ.
 234. 636 ղուան.
 235. 72 բաթման.
 236. 1000 ղուան.
 237. 16 ղու. 50 սմ.
 238. 155 կիլոմետր.
 251. 4 գէազ.
 252. 815 բաթման.
 253. 592 թուման.
 254. 66 բաթման.
 255. 285 փութ.
 256. 13 օր.
 257. 972 ղուան.
 258. 490 թուման.
 259. 935 խնձոր.
 260. 578 գ. 4 գերէ.
 261. 276 գ. 6 փոնղա.
 262. 921 թուման.
 277. 909 ղուան.
 278. 8 տարի.
 279. 234 ղուան.
 280. ա) 105 ղու. բ) 185 գ) 245.
 281. 209 թուման.
 282. 4 ղուան.
 283. 54 պտոյտ.
 284. 690 ղուան 85 սմ.
 285. 639 ղուան.
 286. 3 խալար.
 287. ա) 53 թ. բ) 63 թ. գ) 73.
 288. ա) 90 ղու. բ) 84 ղու.
 289. 125 հատ և 750 հատ.
 290. 178 ղու. 75 սմ.
 291. 57 ոչխար.
 292. 14 օր.
 305. ճաշայ 12 ժ. 45 ր.
 306. 9 ժ. 17 ր. ց. 14 ժ 43 ր գ.
 307. 13 ժ. 50 ր.
 308. 35 ժ. 20 ր.
 309. ուրբաթ առ. 2 ժ. 30 ր. ին
 310. նախ. օրը երեկ 6 ժ. 40 ր.
 312. 11 ղու. 25 սմ.
 313. 56 բաթ.
 314. 738 կիլոմետր.
 315. 72 օրում.
 316. 22 օր.
 317. 16 օր.
 318. 10 օր.
 320. 6 ղու.
 321. 10 սմ.
 322. 1 ղու. 50 սմ. օգուտ.
 323. 17 ղու.
 324. 2 ղու. 50 սմ.
 326. 142 մետր.
 327. 25 ղու. գայլի, 35 աղւէսի.

328. 119 նարինջ.
 329. 4 ղու. 20. սմ.
 330. 810 ղու.
 331. 14 աթոռ.
 333. 14 օր.
 334. 120 երես.
 335. 31 լամպ.
 336. 19 խնդիր.
 337. 13 օր.
 338. 17 զրասեղան.
 339. 45 սմ.
 341. 6 օրում.
 342. 19 օրում.
 343. 7 օրում.
 344. 21 բանուոր.

345. 9 օրում.
 362. 60 ղուան.
 363. 6 ժամ.
 364. 9 ղուան.
 365. 12 ղուան.
 366. 29 աշակերտ.
 367. ա) 306. բ) 294. գ) 210. թ.
 369. 98 թուման.
 371. 45 շիշ.
 372. 105 զրշ.
 373. 1 ղու. 5 սմ.
 374. 25 սմ.
 375. 48 գէազ.
 376. 110 երես.

II ԾԱՍ

35. 180,85 ղու.
 36. 29,75 մետր.
 37. 4,85 կիլոգրամ.
 38. 28 9 տարեկան.
 39. 240,77 կիլոգրամ.
 40. 178,6 ղու.
 41. 686,1 կիլոգրամ.
 42. 763,53 խուրձ.
 43. 156,28 գէազ.
 44. 875 ղու. 50 սմ.
 45. 310 ղու. 15 սմ.
 102. 18,75 գէազ.
 103. 5569,2 ղու.
 104. 11,2 ղու.
 105. 572,4
 106. 28,6 կիլոմետր.
 107. 0,55 ղու.
 108. 96 պտոյտ.
 109. 8,75.
 110. 52,5.
 111. 24,6 ժամ.
 112. 1,2 ղու.
 113. 16,88 թուման.
 114. 63,1 կիլոմետր.
 115. 14,025 կիլոգրամ.
 116. 10,815 մետր.
 117. 30,5 կիլոմետր.
 118. 2,5 ժամից և 63 կիլոմետր
 Թաւրիզից հեռու.
 119. 8,2 ժ. և 275,52 կիլոմետր
 Թհհրանից հեռու.

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Գործածելուց առաջ ուղղել

- 7-րդ երես. 3-րդ տողում մեծութիւնը, պէտք է լինի միութիւնը:
- 51-րդ երես. 5-րդ տող (ներքեկց) „երկրորդ գիւղացին“ պէտք է լինի „երրորդ գիւղացին“:
- 54-րդ երես. № 278 խնդիր. „ամսական 3-ական թուման“ պէտք է լինի „ամսական 1-ական թուման“:
- 64-րդ երես. № 338 խնդիր. „ժամանակին չյանձնելու պատճառով“ պէտք է լինի „ժամանակին յանձնած գրասեղանների համար ստացաւ“:
- 67-րդ երես. № 335 խնդիր. „բաժմանը $\frac{9}{10}$ ղուանով“ պէտք է լինի „բաժմանը $\frac{9}{10}$ թումանով“:
- 68-րդ երես. № 369 խնդիր. „հաւասար է 35-ի“ պէտք է լինի „հաւասար է 35 թումանի“:
- 86-րդ երես. օրինակ՝ ա. „կարդա՛ 39 ամբողջ 9 տասնորդական“ պէտք է լինի „կարդա՛ 35 ամբողջ 9 տասնորդական“:
- 107-րդ երես. ամբողջը չորս հաւասար մասերի բաժանած քառակուսիների մէջ նշանակած է $\frac{1}{2}$, պէտք է լինի $\frac{1}{4}$:

ԳՍԱԳԱՐ-ՄԵԼԵՐՆ ՅԱԿՈԲԵԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Handwritten scribbles in the top left corner.

Handwritten signature or name in the top right corner.

$$\begin{array}{r} 30 \\ \times 28 \\ \hline 240 \\ 60 \\ \hline 840 \end{array}$$

$$\begin{array}{r} 30 \\ 25 \\ \hline 150 \\ 60 \\ \hline 210 \end{array}$$

2

7

ՄՀ Գալագիտական գրադարան



MAL041245

